ԵԴ1/1580/01/25
(ՀԿԴ/0119/01/25)

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՎԱՐՈՒՅԹԻ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԸՆԴԴԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

11 հունիսի 2025 թվական քաղաք Երևան

ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահ Լիլիթ Թադևոսյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի քրեական պալատի նախագահ Համլետ Ասատրյանս, ՀՀ Վճռաբեկ դատարանի հակակոռուպցիոն պալատի նախագահին փոխարինող Արման Կուրեխյանս, ուսումնասիրելով թիվ ԵԴ1/1580/01/25 (ՀԿԴ/0119/01/25) քրեական վարույթի ընդդատության հարցը լուծելու համար ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին Հակակոռուպցիոն դատարանի՝ 2025 թվականի հունիսի 2-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի Ն Ք

<u>Վարույթի դատավարական նախապատմությունը.</u>

1. 2025 թվականի մայիսի 7-ին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանում ստացվել է թիվ 69118225 (ԵԴ1/1580/01/25) քրեական վարույթը:

- Արթուր Էդիկի Գրիգորյանի վերաբերյալ՝ ութ դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, երեք դրվագ՝ 44-255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, չորս դրվագ՝ 43-255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով և տասներեք դրվագ 457-րդ հոդվածի 2-րդ մասով,

- Արթուր Վարդանի Ղազարյանի վերաբերյալ՝ երկու դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով և երկու դրվագ՝ 457-րդ հոդվածի 2-րդ մասով,

- Տարոն Գարեգինի Վիրաբյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով և 457-րդ հոդվածի 2-րդ մասով,

- Վահագն Մանուկի Առաքելյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 44-255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով և երկու դրվագ՝ 457-րդ հոդվածի 2-րդ մասով,

- Հովհաննես Վարդանի Հովհաննիսյանի վերաբերյալ՝ երկու դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 43-255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 44-255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով և երեք դրվագ 457-րդ հոդվածի 2-րդ մասով,

- Անահիտ Հովիկի Պետրոսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 43-255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով և երկու դրվագ՝ 457-րդ հոդվածի 2-րդ մասով,

- Աննա Աշոտի Սահակյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով և 457-րդ հոդվածի 2-րդ մասով,

- Համլետ Արտյոմի Գևորգյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 457-րդ հոդվածի 2-րդ մասով,

- Մարգար Ֆրիդրիխի Մարգարյանի վերաբերյալ՝ երկու դրվագ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով և երկու դրվագ 457-րդ հոդվածի 2-րդ մասով:

1.1. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի մայիսի 12-ին որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1580/01/25 քրեական գործի վարույթը ստանձնելու և նախնական դատալսումներ նշանակելու մասին:

2. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի մայիսի 20-ին՝ նախնական դատալսումների ընթացքում, որոշում է կայացրել թիվ ԵԴ1/1580/01/25 քրեական վարույթն ըստ առարկայական ընդդատության Հակակոռուպցիոն դատարան ուղարկելու մասին:

3. Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի հունիսի 2-ին որոշում է կայացրել թիվ ՀԿԴ/0119/01/25 (ԵԴ1/1580/01/25) քրեական վարույթը Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու մասին՝ ընդդատության հարցը լուծելու համար:

4. Քրեական վարույթը Վճռաբեկ դատարանում ստացվել է 2025 թվականի հունիսի 3-ին:

<u>Ընդդատության հարցը լուծելու համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Արթուր Գրիգորյանի նկատմամբ ութ դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, երեք դրվագ՝ 44-255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, չորս դրվագ՝ 43-255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-

րդ հոդվածի 1-ին մասով և տասներեք դրվագ 457-րդ հոդվածի 2-րդ մասով հանրային քրեական հետապնդում է հարուցվել հանրորեն վտանգավոր այն արարքների համար, որ նա *«(...) մասնակցել է Հարություն Իշխանի Մանուկյանի, Հարություն Վաչագանի Մարտիրոսյանի, Թեհմինա Հակոբի Մանուկյանի և դեռևս չպարզված այլ անձանց կողմից ստեղծված և ղեկավարած հանցավոր կազմակերպությանը և դրա կազմում կատարել մի շարք հանցագործություններ:*

Մասնավորապես, Հարություն Մանուկյանը, Թեհմինա Մանուկյանը 2022 թվականի հուլիս-օգոստոս ամիսներին Հարություն Վաչագանի Մարտիրոսյանի և դեռևս չպարզված այլ անձանց հետ համաձայնության են եկել Երևան քաղաքում գտնվող, այլ անձանց պատկանող այն անշարժ գույքերը կեղծ լիազորագրեր պատրաստելու և օգտագործելու միջոցով խարդախությամբ հափշտակելու շուրջ, որոնք տարբեր պատճառներով մշտապես կամ առավելապես բնակեցված չեն եղել կամ այլ եղանակով չեն օգտագործվել: Այնուհետև, հանցավոր կազմակերպությանը մասնակցելու, մասնավորապես, իրենց նախնական դիտավորությամբ ընդգրկված գործողությունները՝ կեղծ լիազորագրերի օգտագործմամբ Հայաստանի Հանրապետությունում գործող տարբեր մարմիններից անհրաժեշտ փաստաթղթեր ստանալը, նոտարական վավերացմամբ գործարքներին մասնակցելը, դրանց նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցմանը մասնակցելը, այնուհետև՝ որևէ ձևով օտարելն ապահովելու նպատակով հանցավոր կազմակերպությանը մասնակից են դարձրել Բելլա Սերգեյի Ցինդրինային, Նինա Վասիլի Իվանովային, Մարինա Վիկտորի Պերվակովային, Մարգար Ֆրիդրիխի Մարգարյանին, Պասիխատ Իսմաիլզաջիի Մագամեդովային, Մահմուջան Մահամաջանի Տուլանովին, Ռաիսա Սալամբեկի Կիևային, Ռոզա Ուվայսի Կիևային, Անահիտ Հովիկի Պետրոսյանին, Աննա Աշոտի Սահակյանին, Հովհաննես Վարդանի Հովհաննիսյանին, Տարոն Գարեգինի Վիրաբյանին, Վահագն Մանուկի Առաքելյանին, Արթուր Էդիկի Գրիգորյանին, Արթուր Վարդանի Ղազարյանին, Էլմիրա Գեորգիի Սահակյանին, Համլետ Արտյոմի Գևորգյանին և այլ անձանց՝ խոստանալով յուրաքանչյուր անշարժ գույքի վաճառքից վերոգրյալ անձանց տալ տարբեր չափերի գումարներ:

Ընդ որում, հանցավոր կազմակերպությունը ղեկավարելու ընթացքում Հարություն Մանուկյանը, Թեհմինա Մանուկյանը և Հարություն Մարտիրոսյանն ապահովել են խմբի անդամների ջանքերի համաձայնեցվածությունը, խմբի ամրությունը, մասնակիցների կողմից իրենց առջև դրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ կազմակերպվածությունը, ոտնձգությունը համատեղ կատարելու նախապես մշակված եղանակները, դերերի հստակ և մշակված բաշխումը, ինչպես նաև հանցանքների միասնական ջանքերով կատարումն ու հանցավոր կազմակերպության անդամներից յուրաքանչյուրի գործողության համաձայնեցվածությունը մյուսների գործողությունների հետ, իսկ հանցավոր կազմակերպության գործողությունները հաջողությամբ քողարկելու և դրա բացահայտումն

անհնարին դարձնելու նպատակով հանցակիցների գործողությունները ղեկավարելիս Հարություն Մարտիրոսյանը, Թեհմինա Մանուկյանը և Հարություն Մանուկյանը հանցավոր կազմակերպության մասնակիցների հետ կապն ապահովել են բջջային հեռախոսների տարբեր համացանցային հավելվածներից օգտվելու միջոցով, որոնք գրանցված են եղել արտասահմանյան տարբեր բջջային հեռախոսահամարներով:

Վերոգրյալ հանցավոր կազմակերպությունը ստեղծած և ղեկավարած անձինք, հանցավոր կազմակերպության մասնակիցների հետ իրենց առջև դրված նպատակներին հասնելու համար անհրաժեշտ կազմակերպվածությամբ, ոտնձգությունը համատեղ կատարելու նախապես մշակված եղանակով, դերերի հստակ և մշակված բաշխմամբ ու հանցավոր կազմակերպության անդամներից յուրաքանչյուրի գործողության համաձայնեցվածությամբ, կեղծ լիազորագրերի օգտագործմամբ Երևան քաղաքում կատարել են ընդհանուր թվով տասնութ անշարժ գույքի հափշտակություններ, մասնավորապես, դրանցից 4-ը՝ փորձեր, 5-ը՝ նախապատրաստություններ, իսկ 9-ը՝ ավարտված հափշտակություններ, այնուհետև, այդ անշարժ գույքերի օտարման արդյունքում ստացել և հափշտակել են առանձնապես խոշոր չափերի գումարները:

Վերը նշված հանցավոր գործունեության ընթացքում հանցավոր կազմակերպությունը ստեղծած և ղեկավարող Հարություն Մանուկյանը որպես հանցավոր կազմակերպության անդամ հավաքագրել է իր ծանոթ, այդ ընթացքում ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և հատուկ նշանակության բաժնի ավագ հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցնող Արթուր Էդիկի Գրիգորյանին: Մասնավորապես, վերջինս Հ.Մանուկյանից տեղեկանալով վերը նշված հանցավոր գործունեության մասին, հանցավոր համաձայնության է եկել նրա հետ յուրաքանչյուր անշարժ գույքի դեպքում 300 ԱՄՆ դոլարի դիմաց տեղեկատվություն տրամադրել հափշտակման ենթակա անշարժ գույքի սեփականատերերի, ինչպես նաև գույքի նկատմամբ առկա սահմանափակումների վերաբերյալ, իսկ նույն գույքի բարեհաջող օտարման դեպքում՝ ստանալ հավելյալ 5000 ԱՄՆ դոլար:

Այսպես.

Հարություն Իշխանի Մանուկյանը, Հարություն Մարտիրոսյանի և Թեհմինա Մանուկյանի կատարած դերաբաշխմանը համապատասխան, վերջինիս ուղղորդմամբ, անշարժ գույքերի՝ ՀՀ-ից բացակայող սեփականատերերի մասին տեղեկություններ ստանալու նպատակով հանդիպել է Երևան քաղաքում գործող, անշարժ գույքի առուվաճառքով զբաղվող «Բարս» ընկերության գործակալ Տարոն Գարեգինի Վիրաբյանին, ում տեղեկացրել է հանցավոր մտադրության մասին՝ միաժամանակ հայտնելով, որ Մոսկվա քաղաքում ծանոթ ունի, ով կարող է անշարժ գույքերի սեփականատերերի անունից կեղծ փաստաթղթեր պատրաստել: Տարոն Վիրաբյանը, համաձայնություն տալով, ներգրավվել է հանցավոր կազմակերպության մեջ և մի քանի օր անց

Հարություն Մանուկյանին է տրամադրել Երևան քաղաքի՝ սեփականության իրավունքով Սարո Աբիկի Աբրահամյանին պատկանող Զարոբյան փողոցի 14/3 հասցեում գտնվող հողատարածի վերաբերյալ տվյալները, այդ թվում՝ Սարո Աբրահամյանի անձնագրի պատճենը՝ տեղեկացնելով, որ սեփականատերը գտնվում է Իրանի Իսլամական Հանրապետությունում:

Հողատարածքի բոլոր սեփականատերերի, առկա սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով Հարություն Մանուկյանը որպես հանցավոր կազմակերպության մասնակից հավաքագրել է իր ծանոթ, ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և հատուկ նշանակության բաժնի ավագ հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցնող Արթուր Էդիկի Գրիգորյանին՝ տեղեկացնելով վերը նշված հանցավոր գործունեության մասին:

Արթուր Գրիգորյանը հանցավոր համաձայնության է եկել նրա հետ՝ յուրաքանչյուր անշարժ գույքի դեպքում 300 ԱՄՆ դոլարի դիմաց Հ.Մանուկյանին տեղեկատվություն տրամադրել հափշտակման ենթակա անշարժ գույքի սեփականատերերի, ինչպես նաև գույքի նկատմամբ առկա սահմանափակումների վերաբերյալ, իսկ հափշտակությունը բարեհաջող ավարտելու դեպքում՝ ստանալ հավելյալ 5000 ԱՄՆ դոլար:

Արթուր Գրիգորյանն իր աշխատանքային կապերի միջոցով պարզել է, որ Երևան քաղաքի Զարոբյան փողոցի 14/3 հասցեում գտնվող հողատարածքը միանձնյա սեփականությամբ պատկանում է Սարո Աբրահամյանին, գրանցված սահմանափակումներ առկա չեն և բացի այդ անշարժ գույքից, Ս.Աբրահամյանին սեփականության իրավունքով պատկանում է նաև Երևան քաղաքի Բաբայան փողոցի 1/3 հասցեում գտնվող հողատարածքը և այդ մասին հայտնել է Հարություն Մանուկյանին, որի դիմաց ստացել է 300 ԱՄՆ դոլար:

Հարություն Մանուկյանը, ստանալով հողամասի վերաբերյալ ամբողջական տեղեկատվություն, կրկին դիմել է Տարոն Վիրաբյանին, որպեսզի վերջինս, նախնական պայմանավորվածության համաձայն, տվյալներ տրամադրի նշված հողատարածքի հնարավոր գնորդների վերաբերյալ: Տարոն Վիրաբյանի ուղղորդմամբ Հարություն Մանուկյանը դիմել է Երևան քաղաքում շինարարական աշխատանքներով զբաղվող Արտյոմ Նավիկյանին, ով համաձայնվել է 950.000 ԱՄՆ դոլարով գնել Զարոբյան փողոցի 14/3 հասցեում գտնվող հողատարածքը:

Հանցավոր կազմակերպության գործունեության և մշակված հանցավոր սխեմայի մասին Հարություն Մանուկյանը տեղեկացրել է ընկերոջը՝ ՀՀ փաստաբանների պալատի փաստաբան Արթուր Վարդանի Ղազարյանին, ում առաջարկել է որոշակի մասնաբաժնի դիմաց վերը նշված անշարժ գույքի գործարքը կատարել նրա ծանոթ նոտարի մոտ: Արթուր Ղազարյանը համաձայնել է Հարություն Մանուկյանի առաջարկին, որից հետո սեփականության իրավունքով Սարո Աբիկի Աբրահամյանին պատկանող առանձնապես խոշոր չափերի՝ 384.655.000 ՀՀ դրամ արժեքով հողամասը խարդախությամբ հափշտակելու դիտավորությամբ 2022 թվականի

օգոստոսին Թեհմինա Մանուկյանի կազմակերպմամբ Հարություն Մարտիրոսյանի կողմից հավաքագրված հանցավոր կազմակերպության անդամ Մարինա Պերվակովային է փոխանցվել Սարո Աբրահամյանի փոխարեն քաղաքացիաիրավական մի շարք գործարքներ կատարելու, այդ թվում՝ Երևան քաղաքի Զարոբյան փողոցի 14/3 հասցեում գտնվող անշարժ գույքն օտարելու վերաբերյալ իբրև ՌԴ Մոսկվա քաղաքի նոտար Գալինա Պյոտրի Պրիվալովայի ժամանակավոր պաշտոնակատար Նաիրա Ռոբերտի Լազարևայի կողմից 2022 թվականի օգոստոսի 4-ին վավերացված, գործով չպարզված անձի կողմից պատրաստված, իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող, սեղանամատյանի 77/460-ห/77-2022-11-104 համարի տակ գրանցված թիվ 77 AB 9156083 համարի կեղծ լիազորագիրը, որպեսզի Մարինա Պերվակովան, որպես Սարո Աբրահամյանի ներկայացուցիչ, հանդես գալով ՀՀ տարբեր պետական մարմիններում, այդ թվում՝ ՀՀ կադաստրի կոմիտեում, ստանա հիշյալ անշարժ գույքի օտարման համար անհրաժեշտ փաստաթղթերը:

Մարինա Պերվակովան 2022 թվականի օգոստոսի 10-ին ՌԴ-ից ժամանել է Հայաստանի Հանրապետություն և ՀՀ կադաստրի կոմիտե գրավոր դիմում ներկայացրել Երևան քաղաքի Զարոբյան փողոցի 14/3 հասցեի անշարժ գույքի վերաբերյալ միասնական տեղեկատվություն տրամադրելու խնդրանքով:

Այդ ընթացքում Արթուր Ղազարյանի ծանոթ նոտար Լիլիթ Մուրադյանից պարզելով, որ վաճառքի եղանակով օտարումը կատարվում է միայն անկանխիկ եղանակով, հանցավոր կազմակերպության անդամները, ժամանակի սղության պատճառով որոշել են գործարքն իրականացնել նվիրատվության միջոցով, սակայն տվյալ պահին նման իրավասությամբ լիազորագիր չեն ունեցել:

Թեհմինա Մանուկյանը ձեռք է բերել ՌԴ Մոսկվա քաղաքի նոտար Գալինա Պյոտրի Պրիվալովայի ժամանակավոր պաշտոնակատար Նաիրա Ռոբերտի Լազարևայի կողմից 2022 թվականի օգոստոսի 31-ին վավերացված, գործով չպարզված անձի կողմից պատրաստված, իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող, սեղանամատյանի 77/460-ห/77-2022-10-865 համարի տակ գրանցված թիվ 77 AB 9156044 համարի մեկ այլ կեղծ լիազորագիր, որով Մ.Պերվակովան հանդես գալով որպես Սարո Աբիկի Աբրահամյանի լիազորված անձ, օժտվել է գույքը նվիրատվությամբ օտարելու լիազորությամբ:

Այնուհետև, Մ.Պերվակովան 2022 թվականի օգոստոսի 31-ին ՀՀ կադաստրի կոմիտե կրկին գրավոր դիմում է ներկայացրել՝ խնդրելով տրամադրել հիշյալ անշարժ գույքի նոր վկայական՝ դիմումին կից ներկայացնելով իր անձնագրի պատճենը, ՀՀ կադաստրի կոմիտեից ստացած միասնական տեղեկանքը և 2022 թվականի օգոստոսի 4-ին նոտարի կողմից վավերացված 77 AB 9156083 հերթական համարի կեղծ լիազորագիրը: Նշված անշարժ գույքի վկայականը Մարինա Պերվակովային տրամադրվել է 2022 թվականի սեպտեմբերի 1-ին:

Ստանալով նոր վկայականը, օգտագործելով 2022 թվականի օգոստոսի 31-ին վավերացված կեղծ լիազորագիրը, 2022 թվականի սեպտեմբերի 1-ին Արթուր Ղազարյանի ծանոթ, Երևան նոտարական տարածքի նոտար Լիլիթ Մուրադյանի վավերացմամբ կնքել են անշարժ գույքի նվիրատվության պայմանագիր, որով Մարինա Պերվակովան, վերը նշված հասցեի անշարժ գույքը նվիրատվությամբ հանձնել է Հարություն Իշխանի Մանուկյանին, ում սեփականության իրավունքը նշված անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է 2022 թվականի սեպտեմբերի 7-ին, որպիսի գործողություններով խարդախությամբ հափշտակել են Սարո Աբրահամյանին պատկանող առանձնապես խոշոր չափերով գույքը:

Այնուհետև, Հարություն Մանուկյանը նշված անշարժ գույքը փաստացի 950.000 ԱՄՆ դոլարին համարժեք 384.655.000 ՀՀ դրամով վաճառել է Արա Դավոյանին: Մինչև նոտարական կարգով գործարքի վավերացումը, Արթուր Ղազարյանն առաջարկել է Արա Դավոյանի ներկայացուցիչ Արտյոմ Նավիկյանին վաճառքի գումարի մի մասը փոխանցել առձեռն, իսկ մյուս մասը՝ բանկային փոխանցմամբ: Արդյունքում, Երևան նոտարական տարածքի նոտար Աննա Լևոնի Ղազարյանի կողմից 2022 թվականի սեպտեմբերի 21-ին վավերացված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրում Արթուր Ղազարյանի առաջարկով որպես անշարժ գույքի վաճառքի գին նշվել է 213.500.000 ՀՀ դրամ: Ա.Նավիկյանն առուվաճառքի պայմանագրում նշված գումարը Հարություն Մանուկյանին տվել է բանկային փոխանցմամբ, իսկ մնացած մասը՝ առձեռն, որին ներկա է գտնվել նաև Արթուր Ղազարյանը: Դրանից հետո Հարություն Մանուկյանը հափշտակված գումարից որպես մասնաբաժին 40.000-ական ԱՄՆ դոլար տվել է Արթուր Ղազարյանին և Տարոն Վիրաբյանին, 5000 ԱՄՆ դոլար՝ Արթուր Գրիգորյանին, իսկ մնացած գումարը բաժանվել է Հարություն Մանուկյանի, Թեհմինա Մանուկյանի և Հարություն Մարտիրոսյան միջև:

(...)

Բացի այդ, օգտագործելով Արթուր Գրիգորյանի կողմից Սարո Աբիկի Աբրահամյանին պատկանող Երևան քաղաքի Բաբայան փողոցի 1/3 հասցում գտնվող հողամասի վերաբերյալ նախկինում տրամադրած տեղեկությունը, Հարություն Մանուկյանը, Հարություն Մարտիրոսյանը և Թեհմինա Մանուկյանը 2022 թվականի դեկտեմբերից ձեռնամուխ են եղել կեղծ փաստաթղթերի պատրաստման և օգտագործման միջոցով խաբեության եղանակով առանձնապես խոշոր չափերով՝ 144.761.760 ՀՀ դրամ արժողությամբ նշված հողամասի հափշտակությանն ուղղված հանցավոր մտադրության իրագործմանը:

Հանցավոր կազմակերպության մասնակից Բելլա Սերգեյի Ցինդրինան, նշված գույքը ներկայացնելով որպես իր եղբոր սեփականություն, կապ է հաստատել իր ծանոթ Տիգրան Սահակյանի հետ, հայտնել վերջինին, թե իբր իր եղբայրն առողջական խնդիրների պատճառով չի կարող գալ ՀՀ և վաճառել նրան պատկանող գույքը, ապա հարցրել, թե արդյոք կարող է առաջարկել որևէ անձի, ով գումարի դիմաց համապատասխան լիազորագրով ՀՀ-ում

կմասնակցի եղբորը պատկանող գույքի օտարման գործարքի կնքմանը, ինչին ի պատասխան՝ Տ.Սահակյանը հայտնել է ՌԴ-ում բնակվող իր ընկերուհու՝ Անաստասիա Շևցովայի միջոցով նշված գործարքն իրականացնելու հնարավորության մասին՝ Բ.Ցինդրինային փոխանցելով Ա.Շևցովայի բջջային հեռախոսահամարը: Դրանից հետո Բ.Ցինդրինան կապ է հաստատել Ա.Շևցովայի հետ, ով արդեն Տ.Սահակյանից տեղեկացված է եղել վերջինի և Բ.Ցինդրինայի միջև ձեռքբերված պայմանավորվածությանը՝ բացառությամբ՝ դրա դիմաց գումար վճարելու պայմանի: Ա.Շևցովան, համաձայնելով առաջարկին, Բ.Ցինդրինայի հետ ձեռք է բերել ՀՀ մեկնելու և լիազորագրի միջոցով վերը նշված անշարժ գույքի օտարման գործարքն իրականացնելու վերաբերյալ պայմանավորվածություն՝ Բ.Ցինդրինային ուղարկելով իր անձնագրի պատճենը: Դրանից հետո Բ.Ցինդրինան հիշյալ պատճենն տրամադրել է Հ.Մարտիրոսյանին՝ կեղծ լիազորագիր պատրաստելու նպատակով:

Ա.Շևցովան, տեղեկացված չլինելով հիշյալ կազմակերպության հանցավոր նպատակների մասին, 2022 թվականի դեկտեմբերի 13-ին Սոչի-Երևան չվերթով ժամանել է ՀՀ: Հաջորդ օրը դեռևս ինքնությունը չպարզված անձը Երևան քաղաքի Հանրապետության հրապարակում Ա.Շևցովային է փոխանցել քաղաքացիաիրավական մի շարք գործարքներ կատարելու, այդ թվում՝ Երևան քաղաքի Բաբայան փողոցի 1/3 հասցեում գտնվող անշարժ գույքն օտարելու վերաբերյալ իբրև ՌԴ Մոսկվա քաղաքի նոտար Մարիաննա Ռոբերտի Աթոյանի ժամանակավոր պաշտոնակատար Իրինա Վալերի Միլերի կողմից 2022 թվականի նոյեմբերի 3-ին վավերացված, չպարզված անձի կողմից պատրաստված, իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող, իրավունք վերապահող, «77 AB 9156107» հերթական համարի կեղծ լիազորագիրը, որպեսզի Ա.Շևցովան՝ որպես Սարո Աբրահամյանի ներկայացուցիչ, հանդես գա ՀՀ տարբեր պետական մարմիններում: Տ.Սահակյանը և Ա.Շևցովան, տեղյակ չլինելով հիշյալ կազմակերպության հանցավոր նպատակների մասին՝ գործելով անզգուշությամբ, 2022 թվականի դեկտեմբերի 13-ին այցելել են ՀՀ կադաստրի կոմիտեի Կենտրոն սպասարկման գրասենյակ, որտեղ վերջինը դիմում ներկայացնելով՝ խնդրել է տրամադրել Երևան քաղաքի Բաբայան փողոցի 1/3 հողամասի վերաբերյալ միասնական տեղեկատվություն: 2022 թվականի դեկտեմբերի 14-ին Տ.Սահակյանը և Ա.Շևցովան կրկին այցելել են ՀՀ կադաստրի կոմիտեի Կենտրոն սպասարկման գրասենյակ, որտեղ վերջինս գրավոր դիմումով խնդրել է տրամադրել Երևան քաղաքի Բաբայան փողոց 1/3 հասցեում գտնվող անշարժ գույքի նոր վկայական՝ դիմումին կից ներկայացնելով իր անձնագրի, նոտարի կողմից վավերացված, «77 AB 9156107» համարի կեղծ լիազորագրի պատճենները և վճարման անդորրագիրը: Դրանից հետո՝ 2022 թվականի դեկտեմբերի 15-ին կրկին ՀՀ կադաստրի կոմիտեի Կենտրոն սպասարկման գրասենյակ Ա.Շևցովան հասցեագրել է դիմում՝ խնդրելով տրամադրել նույն անշարժ գույքի հատակագծերի պատճենները՝ դիմումին կից կրկին ներկայացնելով վերը նշված կեղծ լիազորագիրը: Այնուհետև, Ա.Շևցովան անշարժ գույքի գործակալ Արթուր Մուրազի Դավոյանի

հետո հանդիպել է Երևան քաղաքի Բաբայան 1/3 հասցեի անշարժ գույքը գնելու ցանկություն հայտնած Գևորգ Արամի Արամյանին և, հանդես գալով որպես Սարո Աբրահամյանի լիազորված անձ, Գ.Արամյանից որպես կանխավճար ստացել է 5000 ԱՄՆ դոլար, որից 3000 ԱՄՆ դոլարն Ա.Շևցովան բանկային փոխանցմամբ ուղարկել է Բ.Ցինդրինային: Հետագայում՝ Գ.Արամյանի կողմից գույքը գնել հրաժարվելուց հետո, Բ.Ցինդրինան նշված անշարժ գույքը շտապ վաճառելու և հանցավոր կազմակերպության նպատակին հասնելու համար համաձայնել է վերոգրյալ անշարժ գույքը վաճառել էականորեն ցածր գնով, սակայն օտարման գործընթացը չի ավարտվել, քանի որ իրավապահ մարմինների կողմից Ա.Շևցովան, Ա.Դավոյանը և Տ.Սահակյանը ձերբակալվել են:

(...)

Բացի այդ, Հարություն Մանուկյանը, Հարություն Մարտիրոսյանը և Թեհմինա Մանուկյանը 2023 թվականի մարտին ձեռնամուխ են եղել կեղծ փաստաթղթերի պատրաստման և օգտագործման միջոցով խաբեության եղանակով Երևան քաղաքի Սայաթ-Նովա պողոտայի 25-րդ շենքի 15-րդ հասցում գտնվող, սեփականության իրավունքով Սերգեյ Կոնովալովին և Աննա Կոնովալովային պատկանող առանձնապես խոշոր չափերով՝ 76.600.000 ՀՀ դրամ արժողությամբ բնակարանի հափշտակությանն ուղղված հանցավոր մտադրության իրագործմանը, որի շրջանակներում նախապես մշակված դերաբաշխման համաձայն՝ անշարժ գույքի բոլոր սեփականատերերի, այդ թվում՝ առկա սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով Հարություն Մանուկյանը դիմել է իր կողմից հավաքագրված հանցավոր կազմակերպության մասնակից, այդ ընթացքում ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և հատուկ նշանակության բաժնի ավագ հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցնող Արթուր Էդիկի Գրիգորյանին:

Արթուր Գրիգորյանն իր աշխատանքային կապերն օգտագործելով պարզել է, որ Երևան քաղաքի Սայաթ-Նովա պողոտայի 25-րդ շենքի 15-րդ բնակարանը համատեղ սեփականության իրավունքով գրանցված է Սերգեյ Կոնովալովի և Աննա Կոնովալովայի անվամբ և գույքի նկատմամբ սահմանափակումներ առկա չեն, այդ տեղեկությունը փոխանցել է Հարություն Մանուկյանին, ինչի դիմաց ստացել է 300 ԱՄՆ դոլար:

Հարություն Մանուկյանն այդ մասին տեղեկացրել է Թեհմինա Մանուկյանին, իսկ վերջինս ձեռնամուխ է եղել լիազորագրի պատրաստման գործընթացին:

Թեհմինա Մանուկյանը ձեռք է բերել և իր ծանոթ Պասիհատ Իսմայիլզաջիի Մագամեդովային է տրամադրել Սերգեյ Կոնովալովի և Աննա Կոնովալովայի փոխարեն քաղաքացիաիրավական մի շարք գործարքներ կատարելու, այդ թվում՝ Երևան քաղաքի Սայաթ-Նովա պողոտայի 25-րդ շենքի 15-րդ բնակարանն օտարելու վերաբերյալ իբրև ՌԴ Մոսկվա քաղաքի նոտար Գալինա Պյոտրի Պրիվալովայի կողմից 2023 թվականի մարտի 14-ին

վավերացված, գործով չպարզված անձի կողմից պատրաստված, իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող, սեղանամատյանի 77/460-ռ/77-2023-6-464 համարում գրանցված թիվ 77 ԱԴ 3298146 համարի կեղծ լիազորագիրը, որով Պասիխատ Մագամեդովան լիազորվել է օտարել նշված բնակարանը:

Պասիխատ Մագամեդովան 2023 թվականի մարտի 16-ին ժամանել է ՀՀ, որից հետո՝ նույն թվականի մարտի 17-ին և մարտի 20-ին դիմումներ է ներկայացրել ՀՀ կադաստրի կոմիտե՝ խնդրելով տրամադրել համապատասխանաբար Երևան քաղաքի Սայաթ-Նովա պողոտայի 25-րդ շենքի 15-րդ բնակարանի վերաբերյալ միասնական տեղեկանք և նոր վկայական, ինչպես նաև փաստաթղթերի պատճեններ թղթային եղանակով՝ առաջին դիմումին կից ներկայացնելով իր անձնագրի պատճենը, թիվ 77 ԱԴ 3298146 համարի կեղծ լիազորագիրը և վճարման անդորրագիրը:

2023 թվականի մարտի 22-ին ՀՀ կադաստրի կոմիտեից ստանալով անհրաժեշտ տեղեկատվությունը՝ Պասիխատ Մագամեդովան, ներկայացնելով վերը նշված կեղծ լիազորագիրը, Երևան նոտարական տարածքում կնքել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով հիշյալ հասցեում գտնվող անշարժ գույքն օտարել է Ժորա Բարեղամի Հարությունյանին, որպիսի գործողությունների արդյունքում հանցավոր կազմակերպության կողմից խարդախության եղանակով հափշտակվել է Սերգեյ Կոնովալովին և Աննա Կոնովալովային պատկանող, առանձնապես խոշոր չափերի արժեք ունեցող բնակարանը, իսկ Ժորա Հարությունյանից՝ որպես պայմանագրի գին վճարված առանձնապես խոշոր չափերով՝ 76.600.000 ՀՀ դրամ գումարը:

Հետագայում, ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, Հարություն Մանուկյանը նշված գումարից 5000 ԱՄՆ դոլարը տվել է Արթուր Գրիգորյանին:

(...)

Բացի այդ, Հարություն Մանուկյանը, Հարություն Մարտիրոսյանը և Թեհմինա Մանուկյանը 2023 թվականի մարտին ձեռնամուխ են եղել կեղծ փաստաթղթերի պատրաստման և օգտագործման միջոցով խաբեության եղանակով Երևան քաղաքի Աբովյան փողոցի 26բ շենքի 30-րդ հասցում գտնվող, սեփականության իրավունքով Ռուզաննա Երվանդի Մխիկյանին պատկանող առանձնապես խոշոր չափերով՝ 58.200.000 ՀՀ դրամ արժողությամբ բնակարանի հափշտակությանն ուղղված հանցավոր մտադրության իրագործմանը, որի շրջանակներում նախապես մշակված դերաբաշխման համաձայն՝ անշարժ գույքի բոլոր սեփականատերերի, այդ թվում՝ առկա սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով Հարություն Մանուկյանը դիմել է իր կողմից հավաքագրված հանցավոր կազմակերպության մասնակից, այդ ընթացքում ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և հատուկ նշանակության բաժնի ավագ հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցնող Արթուր Էդիկի Գրիգորյանին:

Արթուր Գրիգորյանն իր աշխատանքային կապերն օգտագործելով պարզել է, որ Երևան քաղաքի Աբովյան փողոցի 26բ շենքի 30-րդ բնակարանը միանձնյա սեփականությամբ գրանցված է Ռուզաննա Միսիկյանի անվամբ և գույքի նկատմամբ գրանցված սահմանափակումներ առկա չեն, այդ տեղեկությունը փոխանցել է Հարություն Մանուկյանին, ինչի դիմաց ստացել է 300 ԱՄՆ դոլար:

Հարություն Մանուկյանը նշված տեղեկությունը տրամադրել է Թեհմինա Մանուկյանին, իսկ վերջինս ձեռնամուխ է եղել կեղծ լիազորագրի պատրաստման գործընթացին:

Թեհմինա Մանուկյանը ձեռք է բերել իր ծանոթ Պասիխատ Իսմայիլզաջիի Մագամեդովայի անվամբ Ռուզաննա Երվանդի Միսիկյանի, Նաիրա Ալեքսանդրի Ազատյանի և Էմմա Հայկի Կասաբաբովայի փոխարեն քաղաքացիաիրավական մի շարք գործարքներ կատարելու, այդ թվում՝ Երևան քաղաքի Աբովյան փողոցի 26բ շենքի 30-րդ բնակարանն օտարելու վերաբերյալ իբրև ՌԴ Մոսկվա քաղաքի նոտար Ռուսլան Ամմետի Իշմուխամետովի կողմից 2023 թվականի մարտի 14-ին վավերացված, գործով չպարզված անձի կողմից պատրաստված, իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող, սեղանամատյանի 77/2226-ռ/77-2023-8-472 համարում գրանցված թիվ 77 AB 9156034 համարի կեղծ լիազորագիրը, այն տրամադրել Պ.Մագամեդովային, ինչից հետո նա 2023 թվականի ապրիլի 6-ին ժամանել է Հայաստանի Հանրապետություն և նույն օրը դիմումներ է ներկայացրել ՀՀ կադաստրի կոմիտե՝ խնդրելով տրամադրել վերը նշված հասցեում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ միասնական տեղեկատվություն, նոր վկայական և թղթային տարբերակով փաստաթղթերի պատճեններ՝ դիմումին կից ներկայացնելով իր անձնագրի պատճենը, վճարման անդորրագրեր և վերոգրյալ կեղծ լիազորագիրը:

2023 թվականի ապրիլի 7-ին և նույն թվականի ապրիլի 19-ին ՀՀ կադաստրի կոմիտեից ստանալով անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը՝ հանցավոր կազմակերպության դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն ավարտին հասցնելու նպատակով Պասիխատ Մագամեդովան, ներկայացնելով վերը նշված կեղծ լիազորագիրը, Երևան նոտարական տարածքում կնքել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով հիշյալ հասցեում գտնվող անշարժ գույքն օտարել է Տիգրան Իշխանի Հարությունյանին, որպիսի գործողությունների արդյունքում հանցավոր կազմակերպության կողմից խարդախության եղանակով հափշտակվել է Ռուզաննա Միսիկյանին պատկանող, առանձնապես խոշոր չափերի արժեք ունեցող բնակարանը, իսկ Տիգրան Հարությունյանից՝ 97.000.000 ՀՀ դրամ գումարը, մասնավորապես, մինչև առուվաճառքի պայմանագիր կնքելը որպես կանխավճար տված 38.800.000 ՀՀ դրամը, այնուհետև, որպես պայմանագրի գին վճարված առանձնապես խոշոր չափերով՝ 58.200.000 ՀՀ դրամ գումարը:

Հետագայում, ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, Հարություն Մանուկյանը նշված գումարից 5000 ԱՄՆ դոլարը տվել է Արթուր Գրիգորյանին:

(...)

Բացի այդ, Հարություն Մանուկյանը, Հարություն Մարտիրոսյանը և Թեհմինա Մանուկյանը 2023 թվականի մայիսին ձեռնամուխ են եղել կեղծ փաստաթղթերի պատրաստման և օգտագործման միջոցով խաբեության եղանակով Երևան քաղաքի Աբովյան փողոցի 17-րդ շենքի 7-րդ հասցում գտնվող, սեփականության իրավունքով Խաչատուր Էդվարդի Աղումյանին պատկանող առանձնապես խոշոր չափերով՝ 58.200.000 ՀՀ դրամ արժողությամբ բնակարանի հափշտակությանն ուղղված հանցավոր մտադրության իրագործմանը, որի շրջանակներում նախապես մշակված դերաբաշխման համաձայն՝ անշարժ գույքի բոլոր սեփականատերերի, այդ թվում՝ առկա սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով Հարություն Մանուկյանը դիմել է իր կողմից հավաքագրված հանցավոր կազմակերպության մասնակից, այդ ընթացքում ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և հատուկ նշանակության բաժնի ավագ հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցնող Արթուր Էդիկի Գրիգորյանին:

Արթուր Գրիգորյանն իր աշխատանքային կապերն օգտագործելով պարզել է, որ Երևան քաղաքի Աբովյան փողոցի 17-րդ շենքի 7-րդ բնակարանը միանձնյա սեփականության իրավունքով գրանցված է Խաչատուր Աղումյանի անվամբ և գույքի նկատմամբ սահմանափակումներ առկա չեն, այդ տեղեկությունը փոխանցել է Հարություն Մանուկյանին, ինչի դիմաց ստացել է 300 ԱՄՆ դոլար:

Հարություն Մանուկյանն այդ մասին տեղեկացրել է Թեհմինա Մանուկյանին, իսկ վերջինս ձեռնամուխ է եղել լիազորագրի պատրաստման գործընթացին:

Թեհմինա Մանուկյանը ձեռք է բերել և իր ծանոթ Պասիխատ Իսմայիլզաջիի Մագամեդովային է տրամադրել Խաչատուր Աղումյանի փոխարեն քաղաքացիաիրավական մի շարք գործարքներ կատարելու, այդ թվում՝ Երևան քաղաքի Աբովյան փողոցի 17-րդ շենքի 7-րդ բնակարանն օտարելու վերաբերյալ իբրև Սոչիի նոտարական տարածքի նոտար Դմիտրի Յուրիի Նեցվետայլովայի կողմից 2022 թվականի դեկտեմբերի 14-ին վավերացված, գործով չպարզված անձի կողմից պատրաստված, իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող, սեղանամատյանի 23/203-ห/23-2022-8-1472 համարում գրանցված թիվ 77 AB 9156042 համարի կեղծ լիազորագիրը:

Պասիխատ Մագամեդովան 2023 թվականի մայիսի 11-ին ժամանել է Հայաստանի Հանրապետություն և հաջորդ օրը դիմումներ է ներկայացրել ՀՀ կադաստրի կոմիտե՝ խնդրելով տրամադրել համապատասխանաբար վերը նշված հասցեում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ թղթային տարբերակով փաստաթղթերի պատճենները, միասնական տեղեկատվություն և նոր վկայական՝ դիմումին կից ներկայացնելով իր անձնագրի պատճենը և վերը նշված կեղծ լիազորագիրը:

2023 թվականի մայիսի 16-ին ՀՀ կադաստրի կոմիտեից ստանալով անհրաժեշտ ամբողջ տեղեկատվությունը, Պասիխատ Մագամեդովան, ներկայացնելով վերը նշված կեղծ լիազորագիրը, Երևան նոտարական տարածքում կնքել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով հիշյալ հասցեում գտնվող անշարժ գույքն օտարել է Լիպարիտ Վլադիմիրի Հովհաննիսյանին, որպիսի գործողությունների արդյունքում հանցավոր կազմակերպության կողմից խարդախության եղանակով հափշտակվել է Խաչատուր Ադումյանին պատկանող, առանձնապես խոշոր չափերի արժեք ունեցող բնակարանը, իսկ որպես կանխավճար մի քանի փուլով վճարված 27.100.000 ՀՀ դրամը, այնուհետև, որպես պայմանագրի գին վճարված առանձնապես խոշոր չափերով՝ 49.598.000 ՀՀ դրամ գումարը: Լ.Հովհաննիսյանի սեփականության իրավունքը նշված անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է 2023 թվականի մայիսի 22-ին:

Հետագայում, ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, Հարություն Մանուկյանը նշված գումարից 5000 ԱՄՆ դոլարը տվել է Արթուր Գրիգորյանին:

(...)

Բացի այդ, Հարություն Մանուկյանը, Հարություն Մարտիրոսյանը և Թեհմինա Մանուկյանը 2023 թվականի մայիսին ձեռնամուխ են եղել կեղծ փաստաթղթերի պատրաստման և օգտագործման միջոցով խաբեության եղանակով Երևան քաղաքի Աբովյան փողոցի 26ա շենքի 16-րդ հասցում գտնվող, սեփականության իրավունքով Մարինա Արարատի Պետրոսյանին պատկանող առանձնապես խոշոր չափերով՝ 67.900.000 ՀՀ դրամ արժողությամբ բնակարանի հափշտակությանն ուղղված հանցավոր մտադրության իրագործմանը, որի շրջանակներում նախապես մշակված դերաբաշխման համաձայն՝ անշարժ գույքի բոլոր սեփականատերերի, այդ թվում՝ առկա սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով Հարություն Մանուկյանը դիմել է իր կողմից հավաքագրված հանցավոր կազմակերպության մասնակից, այդ ընթացքում ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և հատուկ նշանակության բաժնի ավագ հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցնող Արթուր Էդիկի Գրիգորյանին:

Արթուր Գրիգորյանն իր աշխատանքային կապերն օգտագործելով պարզել է, որ Երևան քաղաքի Աբովյան փողոցի 26ա շենքի 16-րդ բնակարանը միանձնյա սեփականության իրավունքով գրանցված է Մարինա Պետրոսյանի անվամբ և գույքի նկատմամբ սահմանափակումներ առկա չեն, այդ տեղեկությունը փոխանցել է Հարություն Մանուկյանին, ինչի դիմաց ստացել է 300 ԱՄՆ դոլար:

Հարություն Մանուկյանը նշված տեղեկությունը տրամադրել է Թեհմինա Մանուկյանին, իսկ վերջինս ձեռնամուխ է եղել կեղծ լիազորագրի պատրաստման գործընթացին:

Թեհմինա Մանուկյանը ձեռք է բերել իր ծանոթ, հանցավոր կազմակերպության մասնակից Մահմուջան Մահամաջանի Տուլանովի անվամբ Մարինա Պետրոսյանի փոխարեն

քաղաքացիաիրավական մի շարք գործարքներ կատարելու, այդ թվում՝ Երևան քաղաքի Աբովյան փողոցի 26ա շենքի 16-րդ բնակարանն օտարելու վերաբերյալ իբրև Մոսկվա քաղաքի նոտար Գալինա Պյոտրի Պրիվալովայի կողմից 2023 թվականի մայիսի 22-ին վավերացված, գործով չպարզված անձի կողմից պատրաստված, իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող, սեղանամատյանի 77/460-ห/77-2023-1-924 համարում գրանցված թիվ 77 AB 9156031 համարի կեղծ լիազորագիրը, այն տրամադրել Մ.Տուլանովին, որը 2023 թվականի մայիսի 30-ին ժամանել է Հայաստանի Հանրապետություն և նույն օրը դիմում ներկայացրել ՀՀ կադաստրի կոմիտե՝ խնդրելով տրամադրել վերը նշված հասցեում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ միասնական տեղեկատվություն և նոր վկայական՝ դիմումին կից ներկայացնելով իր անձնագրի պատճենը, վճարման անդորրագիր և կեղծ լիազորագիրը:

Մահմուջան Տուլանովը, 2023 թվականի մայիսի 31-ին ՀՀ կադաստրի կոմիտեից ստանալով անհրաժեշտ տեղեկատվությունը, հանցավոր կազմակերպության դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն ավարտին հասցնելու նպատակով, ներկայացնելով վերը նշված կեղծ լիազորագիրը, Երևան նոտարական տարածքում 2023 թվականի հունիսի 7-ին կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով հիշյալ հասցեում գտնվող անշարժ գույքն օտարել է Կարեն Ալեքսանդրի Կարագյոզյանին, որպիսի գործողությունների արդյունքում հանցավոր կազմակերպության կողմից խարդախության եղանակով հափշտակվել է Մարինա Պետրոսյանին պատկանող, առանձնապես խոշոր չափերի արժեք ունեցող բնակարանը, իսկ Կարեն Կարագյոզյանից՝ որպես պայմանագրի գին վճարված առանձնապես խոշոր չափերով՝ 67.900.000 ՀՀ դրամ գումարը:

Միաժամանակ, հանցավոր կազմակերպության դիտավորության մեջ ընդգրկված՝ առուվաճառքի գումարը՝ 67.900.000 ՀՀ դրամը, բանկից շտապ և անխոչընդոտ կանխիկացնելու համար Հ.Մանուկյանը դիմել է Ա.Գրիգորյանին, իսկ վերջինս ստանձնելով այդ հարցի կարգավորման ղեկավարումը, դիմել է իր ծանոթ, նախկինում ՀՀ ԱՆ ԴԱՀԿ ծառայությունում աշխատած, իսկ տվյալ ժամանակահատվածում «Յունիբանկ» ԲԲ ընկերության 47 մասնաճյուղի կառավարիչ Միհրան Մարկոսյանին, ով ընդառաջել է Ա.Գրիգորյանի խնդրանքին:

Հետագայում, ձեռք բերված պայմանավորվածության համաձայն, Հարություն Մանուկյանը նշված գումարից 5000 ԱՄՆ դոլարը տվել է Արթուր Գրիգորյանին:

(...)

Բացի այդ, Հարություն Մանուկյանը, Հարություն Մարտիրոսյանը և Թեհմինա Մանուկյանը 2022 թվականի մայիսին ձեռնամուխ են եղել կեղծ փաստաթղթերի պատրաստման և օգտագործման միջոցով խաբեության եղանակով Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի 116-րդ շենքի 36-րդ հասցում գտնվող, սեփականության իրավունքով Լիանա Վարուժանի Վասակյանին պատկանող առանձնապես խոշոր չափերով՝ 13.435.202 ՀՀ դրամ արժողությամբ

բնակարանի հափշտակությանն ուղղված հանցավոր մտադրության իրագործմանը, որի շրջանակներում նախապես մշակված դերաբաշխման համաձայն՝ անշարժ գույքի բոլոր սեփականատերերի, այդ թվում՝ առկա սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով Հարություն Մանուկյանը դիմել է իր կողմից հավաքագրված հանցավոր կազմակերպության մասնակից, այդ ընթացքում ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և հատուկ նշանակության բաժնի ավագ հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցնող Արթուր Էդիկի Գրիգորյանին:

Արթուր Գրիգորյանն իր աշխատանքային կապերն օգտագործելով պարզել է, որ Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի 116-րդ շենքի 36-րդ հասցում գտնվող բնակարանը միանձնյա սեփականությամբ գրանցված է Լիանա Վասակյանի անվամբ և գույքի նկատմամբ գրանցված սահմանափակումներ առկա չեն, բացի դա, Լիանա Վասակյանին է պատկանում նաև նույն շենքի 37-րդ բնակարանը: Այդ տեղեկությունը փոխանցել է Հարություն Մանուկյանին, ինչի դիմաց ստացել է 300 ԱՄՆ դոլար:

Հարություն Մանուկյանը նշված տեղեկությունը տրամադրել է Թեհմինա Մանուկյանին, իսկ վերջինս ձեռնամուխ է եղել կեղծ լիազորագրի պատրաստման գործընթացին:

Թեհմինա Մանուկյանի կողմից հավաքագրված հանցավոր կազմակերպության անդամ Մահմուջան Մահամաջանի Տուլանովը 2023 թվականի մայիսի 30-ին ժամանել է Հայաստանի Հանրապետություն: Վերջինիս օգնելու նպատակով հաջորդ օրը Հայաստանի Հանրապետություն է ժամանել նաև հանցավոր կազմակերպության անդամ Պասիխատ Իսմայիլզաջիի Մագամեդովան, որից հետո վերջիններս 2023 թվականի մայիսի 31-ին փոխել են վերը նշված բնակարանի մուտքի դռան փականը՝ հետագայում հնարավոր գնորդներին բնակարանը որպես իրենցը ներկայացնելու նպատակով: Սակայն 2023 թվականի հունիսի 1-ին բնակարանի մուտքի դռան փականը փոխարինված լինելու հանգամանքը հայտնաբերվել է բնակարանը վարձակալած Արաքսիա Սարգսի Գրիգորյանի կողմից, ով այդ մասին նախ տեղեկացրել է սեփականատիրոջը՝ Լիանա Վասակյանին, այնուհետև՝ կատարվածի մասին ահազանգել է ոստիկանություն:

Արդյունքում, հանցավոր կազմակերպության նշված անդամների կամքից անկախ հանգամանքներով վերջիններս չեն կարողացել սկսել հանցավոր կազմակերպության դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի օբյեկտիվ կողմի կատարումը:

(...)

Բացի այդ, Հարություն Մանուկյանը, Արթուր Գրիգորյանից արդեն իսկ տեղեկացված լինելով, որ բացի վերը նշված բնակարանից, Լիանա Վասակյանին է պատկանում նաև նույն շենքի 37-րդ բնակարանը, Հարություն Մարտիրոսյանի և Թեհմինա Մանուկյանի հետ 2022 թվականի մայիսին ձեռնամուխ են եղել կեղծ փաստաթղթերի պատրաստման և օգտագործման միջոցով խաբեության եղանակով Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի 116-րդ շենքի 37-րդ

հասցում գտնվող, սեփականության իրավունքով Լիանա Վարուժանի Վասակյանին պատկանող առանձնապես խոշոր չափերի՝ 27.473.999 ՀՀ դրամ արժողությամբ բնակարանի հափշտակությանը:

Թեհմինա Մանուկյանի կողմից հավաքագրված հանցավոր կազմակերպության անդամ Մահմուջան Մահամաջանի Տուլանովը 2023 թվականի մայիսի 30-ին ժամանել է Հայաստանի Հանրապետություն: Վերջինիս օգնելու նպատակով հաջորդ օրը ՀՀ է ժամանել նաև հանցավոր կազմակերպության անդամ Պասիխատ Իսմայիլզաջիի Մագամեդովան, որից հետո վերջիններս 2023 թվականի մայիսի 31-ին փոխել են վերը նշված բնակարանի մուտքի դռան փականը՝ հետագայում հնարավոր գնորդներին բնակարանը որպես իրենցը ներկայացնելու նպատակով: Սակայն 2023 թվականի հունիսի 1-ին բնակարանի մուտքի դռան փականը փոխարինված լինելու հանգամանքը հայտնաբերվել է հարևանությամբ բնակարանը վարձակալած Արաքսիա Սարգսի Գրիգորյանի կողմից, ով այդ մասին նախ տեղեկացրել է սեփականատիրոջը՝ Լիաննա Վասակյանին, այնուհետև կատարվածի մասին ահազանգել է ոստիկանություն:

Արդյունքում, հանցավոր կազմակերպության նշված անդամների կամքից անկախ հանգամանքներով վերջիններս չեն կարողացել սկսել հանցավոր կազմակերպության դիտավորության մեջ ընդգրկված հանցանքի օբյեկտիվ կողմի կատարումը:

(...)

Բացի այդ, Հարություն Մանուկյանը, Հարություն Մարտիրոսյանը և Թեհմինա Մանուկյանը 2023 թվականի հուլիսին ձեռնամուխ են եղել կեղծ փաստաթղթերի պատրաստման և օգտագործման միջոցով խաբեությամբ Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի 8-րդ հասցում գտնվող, սեփականության իրավունքով Աշոտ Կամսարի Կոստանյանին պատկանող առանձնապես խոշոր չափերով՝ 54.279.960 ՀՀ դրամ արժողությամբ բնակարանի հափշտակությանն ուղղված հանցավոր մտադրության իրագործմանը, որի շրջանակներում նախապես մշակված դերաբաշխման համաձայն՝ անշարժ գույքի բոլոր սեփականատերերի, այդ թվում՝ առկա սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով Հարություն Մանուկյանը դիմել է իր կողմից հավաքագրված հանցավոր կազմակերպության մասնակից, այդ ընթացքում ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և հատուկ նշանակության բաժնի ավագ հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցնող Արթուր Էդիկի Գրիգորյանին:

Արթուր Գրիգորյանն իր աշխատանքային կապերն օգտագործելով պարզել է, որ Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի 8-րդ հասցում գտնվող բնակարանը միանձնյա սեփականության իրավունքով գրանցված է Աշոտ Կոստանյանի անվամբ և գույքի նկատմամբ սահմանափակումներ առկա չեն, այդ տեղեկությունը փոխանցել է Հարություն Մանուկյանին, ինչի դիմաց ստացել է 300 ԱՄՆ դոլար:

Հարություն Մանուկյանն այդ մասին տեղեկացրել է Թեհմինա Մանուկյանին:

Թեհմինա Մանուկյանը ձեռք է բերել և իր ծանոթ, հանցավոր կազմակերպության մասնակից Ռաֆսա Կիևային է տրամադրել Աշոտ Կոստանյանի փոխարեն քաղաքացիաիրավական մի շարք գործարքներ կատարելու, այդ թվում՝ Երևան քաղաքի Աղայան փողոցի 19 շենքի 8-րդ բնակարանը Ռոզա Կիևային նվիրելու վերաբերյալ իբրև Մոսկվա քաղաքի նոտար Ռուսլան Ահմեդի Իշմուխամետովի կողմից 2023 թվականի հուլիսի 13-ին վավերացված, գործով չպարզված անձի կողմից պատրաստված, իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող, սեղանամատյանի 77/2226-ռ/77-2023-15-15-32 համարում գրանցված թիվ 77 АД 4023532 համարի կեղծ լիազորագիր:

Հանցավոր կազմակերպության անդամներ Ռաֆսա Սալամբեկի Կիևան և Ռոզա Ուվայսի Կիևան 2023 թվականի հուլիսի 14-ին նույն չվերթով ժամանել են Հայաստանի Հանրապետություն: Նրանց դիմավորել է Թեհմինա Մանուկյանի ազգական, հանցավոր կազմակերպության անդամ Վահագն Առաքելյանը, ով նաև հաջորդիվ ապահովել է նրանց տեղաշարժը և անհրաժեշտ փաստաթղթերի ձեռք բերումը:

2023 թվականի հուլիսի 18-ին և 19-ին Ռաֆսա Կիևան դիմումներ է ներկայացրել ՀՀ կադաստրի կոմիտե՝ խնդրելով տրամադրել Երևան քաղաքի վերը նշված հասցեում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ միասնական տեղեկատվություն, գույքի նոր վկայական, բնակարանի հատակագծի պատճենները՝ դիմումներին կից ներկայացնելով վերը նշված կեղծ լիազորագիրը:

Ռաֆսա Կիևան, 2023 թվականի հուլիսի 19-ին ՀՀ կադաստրի կոմիտեից ստանալով անհրաժեշտ տեղեկատվությունը, ներկայացնելով վերը նշված կեղծ լիազորագիրը, Երևան նոտարական տարածքում 2023 թվականի հուլիսի 24-ին կնքված անշարժ գույքի նվիրատվության պայմանագրով հիշյալ հասցեում գտնվող անշարժ գույքը հանձնել է Ռոզա Կիևային:

Նույն օրը Ռոզա Կիևան դիմում է ներկայացրել ՀՀ կադաստրի կոմիտե՝ խնդրելով Երևան քաղաքի Աղայան փողոցի 19-րդ շենքի 8-րդ բնակարանի նկատմամբ կատարել իրավունքի պետական գրանցում:

Նույն ժամանակ Վահագն Առաքելյանը դիմել է Երևան քաղաքի Կենտրոն վարչական շրջանի աշխատակազմ և ստացել նշված բնակարանի տեղական հարկի, պարտավորությունների վերաբերյալ տեղեկանք ու այն առանձին դիմումով ներկայացրել ՀՀ կադաստրի կոմիտե՝ խնդրելով տեղեկանքը կցել Ռոզա Կիևայի կողմից ներկայացրած դիմումին, որպեսզի կատարվի իրավունքի պետական գրանցում: Արդյունքում հանցավոր կազմակերպության վերը նշված անդամների միմյանց փոխլրացնող գործողությունների արդյունքում Ռոզա Կիևայի սեփականության իրավունքը նշված անշարժ գույքի նկատմամբ գրանցվել է 2023 թվականի հուլիսի 26-ին:

Արդյունքում, հանցավոր կազմակերպության կողմից խարդախության եղանակով հափշտակվել է Աշոտ Կամսարի Կոստանյանին պատկանող, առանձնապես խոշոր չափերի արժեք ունեցող բնակարանը:

(...)

Բացի այդ, Հարություն Մանուկյանը, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում գործող համատիրություններից մեկի աշխատակից ոմն Նարինեից տեղեկություն ստանալով, որ Երևան քաղաքի Սայաթ-Նովա պողոտայի 33-րդ շենքի 67, 67ա հասցեում գտնվող բնակարանը տևական ժամանակ բնակեցված չէ, այդ մասին հայտնել է Թեհմինա Մանուկյանին և Հարություն Մարտիրոսյանին, որից հետո ձեռնամուխ են եղել կեղծ փաստաթղթերի պատրաստման և օգտագործման միջոցով խաբեության եղանակով առանձնապես խոշոր չափերով՝ 55.789.469 ՀՀ դրամ արժողությամբ նշված բնակարանը հափշտակելուն:

Բնակարանի սեփականատերերի և առկա սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով Հարություն Մանուկյանը դիմել է իր կողմից հավաքագրված հանցավոր կազմակերպության մասնակից, այդ ընթացքում ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և հատուկ նշանակության բաժնի ավագ հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցնող Արթուր Էդիկի Գրիգորյանին:

Արթուր Գրիգորյանն իր աշխատանքային կապերն օգտագործելով պարզել է, որ Երևան քաղաքի Սայաթ-Նովա պողոտայի 33-րդ շենքի 67, 67ա հասցեում գտնվող բնակարանը միանձնյա սեփականության իրավունքով պատկանում է Վալտեր Շառլի Բանդազանին և գույքի նկատմամբ սահմանափակումներ առկա չեն, այդ մասին հայտնել է Հարություն Մանուկյանին և դրա դիմաց ստացել 300 ԱՄՆ դոլար:

Հարություն Մանուկյանը վերոգրյալ տեղեկատվությունը փոխանցել է Թեհմինա Մանուկյանին, ով ձեռնամուխ է եղել կեղծ լիազորագրի պատրաստման գործընթացին և ձեռք է բերել ու իր ծանոթ, հանցավոր կազմակերպության մասնակից Ռաիսա Կիևային է տրամադրել Վալտեր Բանդազանի փոխարեն քաղաքացիաիրավական մի շարք գործարքներ կատարելու, այդ թվում՝ Երևան քաղաքի Սայաթ-Նովա պողոտայի 33-րդ շենքի 67, 67ա բնակարանը Ռոզա Կիևային նվիրելու վերաբերյալ իբրև Մոսկվա քաղաքի նոտար Ռուսլան Ահմեդի Իշմուխամետովի կողմից 2023 թվականի հունիսի 13-ին վավերացված, գործով չպարզված անձի կողմից պատրաստված, իրավաբանական նշանակություն ունեցող փաստ հավաստող, սեղանամատյանի 77/2226-ห/77-2023-8-164 համարում գրանցված թիվ 77 ԱԴ 4041877 համարի կեղծ լիազորագիրը:

Դրանից հետո հանցավոր կազմակերպության անդամներ Ռաիսա Սալամբեկի Կիևան և Ռոզա Ուվայսի Կիևան 2023 թվականի հուլիսի 14-ին նույն չվերթով ժամանել են ՀՀ: Նրանց

դիմավորել է Թեհմինա Մանուկյանի ազգական, հանցավոր կազմակերպության անդամ Վահագն Առաքելյանը, ով նաև հաջորդիվ ապահովել է նրանց տեղաշարժը և անհրաժեշտ փաստաթղթերի ձեռք բերումը:

2023 թվականի հուլիսի 18-ին և 20-ին Վահագն Առաքելյանը Ռաիսա Կիևային ուղեկցել է ՀՀ կադաստրի կոմիտե, որտեղ նա դիմումներ է ներկայացրել՝ խնդրելով տրամադրել Երևան քաղաքի վերը նշված հասցեում գտնվող անշարժ գույքի վերաբերյալ միասնական տեղեկատվություն, գույքի նոր վկայական, բնակարանի հատակագծի պատճենները՝ դիմումներին կից ներկայացնելով կեղծ լիազորագիրը:

2023 թվականի հուլիսի 21-ին ՀՀ կադաստրի կոմիտեից ստանալով անհրաժեշտ տեղեկատվությունը, հանցավոր կազմակերպության դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն ավարտին հասցնելու նպատակով, 2023 թվականի հուլիսի 27-ին Ռաիսա Կիևան, Վահագն Առաքելյանի ուղեկցությամբ գնացել է Երևան նոտարական տարածքի նոտար Լինա Գագիկի Հովսեփյանի գրասենյակ և ներկայացնելով վերը նշված կեղծ լիազորագիրը, փորձել է համապատասխան պայմանագրով հիշյալ հասցեում գտնվող անշարժ գույքը հանձնել Ռոզա Կիևային, սակայն նոտար Լինա Գագիկի Հովսեփյանը հայտնաբերել է լիազորագրի կեղծ լինելու հանգամանքը և ահազանգել ոստիկանություն՝ ինչի արդյունքում հանցավոր կազմակերպության կամքից անկախ հանգամանքներով հանցավոր կազմակերպության դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը չի իրագործվել:

(...)

Բացի այդ, Հարություն Մանուկյանը, պարզելով, որ Երևան քաղաքի Թումանյան փողոցի 34-րդ շենքի 4-րդ հասցեում գտնվող բնակարանը տևական ժամանակ բնակեցված չէ, այդ մասին հայտնել է Թեհմինա Մանուկյանին և Հարություն Մարտիրոսյանին, որից հետո ձեռնամուխ են եղել կեղծ փաստաթղթերի պատրաստման և օգտագործման միջոցով խաբեության եղանակով նշված բնակարանը հափշտակելուն:

Բնակարանի սեփականատերերի և առկա սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով Հարություն Մանուկյանը դիմել է իր կողմից հավաքագրված հանցավոր կազմակերպության մասնակից, այդ ընթացքում ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և հատուկ նշանակության բաժնի ավագ հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցնող Արթուր Էդիկի Գրիգորյանին:

Արթուր Գրիգորյանն իր աշխատանքային կապերն օգտագործելով պարզել է, որ Երևան քաղաքի Թումանյան փողոցի 34-րդ շենքի 4-րդ հասցեում գտնվող բնակարանը միանձնյա սեփականության իրավունքով պատկանում է Լուսինե Ղազարյանին և գույքի նկատմամբ սահմանափակումներ առկա չեն, այդ մասին հայտնել է Հարություն Մանուկյանին և դրա դիմաց ստացել 300 ԱՄՆ դոլար:

Հարություն Մանուկյանը վերոգրյալ տեղեկատվությունը փոխանցել է Թեհմինա Մանուկյանին, ով ձեռնամուխ է եղել կեղծ լիազորագրի պատրաստման գործընթացին, որի շրջանակներում ՌԴ է հրավիրել իր մտերիմ, հանցավոր կազմակերպության մասնակից Աննա Աշոտի Սահակյանին, ով 2023 թվականի սեպտեմբերի 27-ին ՀՀ-ից մեկնել է ՌԴ Մոսկվա քաղաք:

Մոսկվա քաղաքում Աննա Սահակյանի լուսանկարով և Լուսինե Մանվելի Ղազարյանի անձնական տվյալներով Թեհմինա Մանուկյանը ոմն Կամոյի օժանդակությամբ պատրաստել է Հայաստանի Հանրապետության քաղաքացու AS0693946 սերիա-համարի կեղծ անձնագիր, որից հետո Աննա Սահակյանը նշված կեղծ անձնագիրն օգտագործելով, որպես Լուսինե Ղազարյան, 2023 թվականի սեպտեմբերի 29-ին դիմել է ՌԴ Մոսկվա քաղաքի նոտար Աննա Ալեքսեյի Վասինայի ժամանակավոր պաշտոնակատար Տատյանա Ալեքսանդրի Մոսկովեցի գրասենյակ և սեղանամատյանի 77/351-ռ/77-2023-5-78 համարի տակ գրանցված թիվ 77 АД 4475696 հերթական համարով լիազորագիր է տվել Գայանե Մարգարյանի անվամբ, որով Գ.Մարգարյանը լիազորվել է օտարել հիշյալ բնակարանը:

Հանցավոր կազմակերպությունը ստեղծած և ղեկավարող անձինք 2023 թվականի սեպտեմբերին հանցավոր կազմակերպության անդամ Մարգար Ֆրիդրիխի Մարգարյանի միջոցով հանցավոր կազմակերպության մասնակից չհանդիսացող Գայանե Մարգարյանին:

Գայանե Մարգարյանը 2023 թվականի հոկտեմբերի 5-ին ՀՀ կադաստրի կոմիտե գրավոր դիմումներ է ներկայացրել՝ խնդրելով տրամադրել Երևան քաղաքի Թումանյան փողոցի 34-րդ շենքի 4-րդ բնակարանի նոր վկայականը, բնակարանի հատակագծի պատճենները, ինչպես նաև բնակարանի վերաբերյալ միասնական տեղեկատվություն՝ դիմումին կից ներկայացնելով իր անձնագրի պատճենը, նոտարի կողմից վավերացված 77 АД 4475696 համարի կեղծ լիազորագիրը:

Նշված փաստաթղթերը ստանալուց հետո՝ Գայանե Մարգարյանը, ներկայացնելով վերը նշված կեղծ լիազորագիրը, Երևան նոտարական տարածքում 2023 թվականի հոկտեմբերի 9-ին կնքել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով հիշյալ հասցեում գտնվող անշարժ գույքն օտարել է Վարդան Արթուրի Վարդանյանին, որպիսի գործողությունների արդյունքում հանցավոր կազմակերպության կողմից խարդախության եղանակով հափշտակվել է Լուսինե Ղազարյանին պատկանող, առանձնապես խոշոր չափերի արժեք ունեցող բնակարանը, իսկ Վարդան Վարդանյանից՝ որպես պայմանագրի գին վճարված առանձնապես խոշոր չափերով՝ 270.000 ԱՄՆ դոլարին համարժեք 107.330.400 դրամ գումարը:

Այնուհետև, Գայանե Մարգարյանը նշված անշարժ գույքի օտարման արդյունքում ստացված գումարը երկու փուլով կանխիկացրել է և այն փոխանցել անշարժ գույքի վաճառքի գործակալ Սարգիս Նորայրի Մինասյանին, ով պայմանավորվածության համաձայն վերցրել է վաճառքի գումարի 2 տոկոս միջնորդավճարը, իսկ մնացած գումարը փոխանցել Մարգար

Մարգարյանին, ով էլ իր հերթին գումարը փոխանցել է Հարություն Մանուկյանին: Վերջինս նշված գումարից 50.000 դոլարը պահել է իրեն, 200.000 ՀՀ դրամ առձեռն փոխանցել է Մարգար Մարգարյանին, 5.000 ԱՄՆ դոլար առձեռն փոխանցել է Արթուր Գրիգորյանին, իսկ մնացած գումարը Մոսկվա քաղաքում փոխանցել է Թեհմինա Մանուկյանին, ով դրանից 20.000 դոլարին համարժեք ռուբլին փոխանցել է Հարություն Մարտիրոսյանին:

(...)

Բացի այդ, Հարություն Մանուկյանը, պարզելով, որ Երևան քաղաքի Բայրոնի փողոցի 2/1 շենքի 2-րդ բնակարանը տևական ժամանակ բնակեցված չէ, այդ մասին հայտնել է Թեհմինա Մանուկյանին ու Հարություն Մարտիրոսյանին և 2023 թվականի սեպտեմբերից ձեռնամուխ են եղել կեղծ փաստաթղթերի պատրաստման և օգտագործման միջոցով խաբեության եղանակով Երևան քաղաքի Բայրոնի փողոցի 2/1 շենքի 2-րդ բնակարանի հափշտակությանը, որի շրջանակներում նախապես մշակված դերաբաշխման համաձայն՝ բնակարանի սեփականատերերի, այդ թվում՝ առկա սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով Հարություն Մանուկյանը դիմել է իր կողմից հավաքագրված հանցավոր կազմակերպության մասնակից, այդ ընթացքում ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և հատուկ նշանակության բաժնի ավագ հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցնող Արթուր Էդիկի Գրիգորյանին:

Արթուր Գրիգորյանն իր աշխատանքային կապերն օգտագործելու միջոցով պարզել է, որ Երևան քաղաքի Բայրոնի փողոցի 2/1 շենքի 2-րդ բնակարանը միանձնյա սեփականության իրավունքով պատկանում է Ալլա Ավագյանի անվամբ և գույքի նկատմամբ սահմանափակումներ առկա չեն, ինչի մասին հայտնել է Հարություն Մանուկյանին և դրա դիմաց ստացել 300 ԱՄՆ դոլար:

Հարություն Մանուկյանը վերոգրյալի մասին տեղեկացրել է Թեհմինա Մանուկյանին, իսկ վերջինս ձեռնամուխ է եղել կեղծ լիազորագրի պատրաստման գործընթացին, որի շրջանակներում ՌԴ է հրավիրել իր մտերիմ, հանցավոր կազմակերպության մասնակից Անահիտ Հովիկի Պետրոսյանին, ով 2023 թվականի հոկտեմբերի 25-ին մեկնել է ՌԴ Մոսկվա քաղաք:

Մոսկվայում Ա.Պետրոսյանի լուսանկարով և Ալլա Յուրիի Ավագյանի անձնական տվյալներով Թեհմինա Մանուկյանը ոմն Կամոյի օժանդակությամբ պատրաստել է Մոլդովայի Հանրապետության քաղաքացու կեղծ անձնագիր, որից հետո Անահիտ Պետրոսյանը նշված կեղծ անձնագիրն օգտագործելով, որպես Ալլա Ավագյան 2023 թվականի հոկտեմբերի 26-ին դիմել է ՌԴ Մոսկվա քաղաքի նոտար Վեռա Սերգեյի Սելենկովայի գրասենյակ և սեղանամատյանի 77/507-ห/77-2023-3-281 համարի տակ գրանցված թիվ 77 ԱԴ 3484814 հերթական համարի կեղծ լիազորագիր է տվել Վիկտոր Տավարածյանի անվամբ, որպեսզի վերջինս, որպես Ալլա Ավագյանի լիազորված անձ, օտարի հիշյալ բնակարանը:

Հանցավոր կազմակերպությունը ստեղծած և ղեկավարող անձինք 2023 թվականի հոկտեմբերի 27-ին Վիկտոր Տավարածյանին փոխանցվելիք կեղծ լիազորագիրը Ռուսաստանի Դաշնությունում տվել են Անի Համլետի Համբարձումյանին, ով, ժամանելով Հայաստանի Հանրապետություն, այն փոխանցել է հանցավոր կազմակերպության մասնակից չհանդիսացող Վ.Տավարածյանին, որպեսզի խոստացված գումարի դիմաց Վիկտոր Տավարածյանը, որպես Ալլա Ավագյանի ներկայացուցիչ, հանդես գալով ՀՀ տարբեր պետական մարմիններում, այդ թվում՝ ՀՀ կադաստրի կոմիտեում, ստանա հիշյալ անշարժ գույքի նկատմամբ օտարման գործարքներ կատարելու համար անհրաժեշտ փաստաթղթեր:

Վիկտոր Տավարածյանը 2023 թվականի հոկտեմբերի 27-ին ՀՀ կադաստրի կոմիտե գրավոր դիմումներ է ներկայացրել՝ խնդրելով տրամադրել Երևան քաղաքի Բայրոնի փողոցի 2/1 շենքի 2-րդ բնակարանի նոր վկայական, ինչպես նաև բնակարանի վերաբերյալ միասնական տեղեկատվություն՝ դիմումին կից ներկայացնելով իր անձնագրի պատճենը, վճարման անդորրագիրը, ինչպես նաև նոտարի կողմից վավերացված 77 АД 3484814 համարի կեղծ լիազորագիրը:

ՀՀ կադաստրի կոմիտեից ստանալով անհրաժեշտ տեղեկատվությունը՝ Վիկտոր Տավարածյանը, ներկայացնելով վերը նշված կեղծ լիազորագիրը, Երևան նոտարական տարածքում նոտար Նունե Ռազմիկի Սարգսյանի վավերացմամբ 2023 թվականի նոյեմբերի 7-ին կնքել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր, որով հիշյալ անշարժ գույքն օտարել է Հովնան Վասիլի Շահբազյանին, որպիսի գործողությունների արդյունքում հանցավոր կազմակերպության կողմից խարդախության եղանակով հափշտակվել է վերջինի կողմից որպես կանխավճար տված 5.000 ԱՄՆ դոլարին համարժեք 2.000.000 ՀՀ դրամը և որպես պայմանագրի գին վճարված առանձնապես խոշոր չափերով՝ 89.100.000 ՀՀ դրամ գումարը:

Հ.Շահբազյանի սեփականության իրավունքը հիշյալ գույքի նկատմամբ չի գրանցվել, քանի որ նշված անշարժ գույքի իրական սեփականատեր Ալլա Ավագյանը, տեղեկանալով իր անվամբ կազմված կեղծ լիազորագրով առուվաճառքի պայմանագիր կնքված լինելու մասին, հայտնել է համապատասխան նոտարին և ՀՀ կադաստրի կոմիտեում սեփականության իրավունքի գրանցման գործարքը կասեցվել է:

Վերը նշված անշարժ գույքի օտարման արդյունքում ստացված գումարից Վիկտոր Տավարածյանը որպես միջնորդավճար վերցրել է 1.215.000 ՀՀ դրամ, իսկ մնացած գումարը երկու փուլով Երևան քաղաքում փոխանցել է հանցավոր կազմակերպության մասնակից Մարգար Մարգարյանին, ով ներկայացել է Սարգիս անվամբ: Վերջինս գումարները փոխանցել է Հարություն Մանուկյանին, ով այդ գումարից 50.000 ԱՄՆ դոլարը պահել է իրեն, 20.000 ԱՄՆ դոլարը ուղարկել է Հարություն Մարտիրոսյանին, 500 ԱՄՆ դոլար տվել է Մարգար Մարգարյանին, 5.000 ԱՄՆ դոլար՝ Արթուր Գրիգորյանին, 10.000 ԱՄՆ դոլարը բրոկերների ծառայության վճարն է կազմել, իսկ մնացած գումարը փոխանցել է Թեհմինա Մանուկյանին:

(...)

Բացի այդ, Հարություն Մանուկյանը, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում գործող համատիրություններից մեկի աշխատակից ոմն Նարինեից տեղեկություն ստանալով, որ Երևան քաղաքի Տերյան փողոցի 62ա շենքի 4-րդ բնակարանը տևական ժամանակ բնակեցված չէ, այդ մասին հայտնել է Թեհմինա Մանուկյանին և Հարություն Մարտիրոսյանին, և 2024 թվականի հունվարից ձեռնամուխ են եղել կեղծ փաստաթղթերի պատրաստման ու օգտագործման միջոցով խաբեության եղանակով այդ բնակարանը հափշտակելուն:

Բնակարանի սեփականատերերի և առկա սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով Հարություն Մանուկյանը դիմել է իր կողմից հավաքագրված հանցավոր կազմակերպության մասնակից, այդ ընթացքում ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և հատուկ նշանակության բաժնի ավագ հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցնող Արթուր Էդիկի Գրիգորյանին:

Արթուր Գրիգորյանն իր աշխատանքային կապերն օգտագործելով պարզել է, որ Երևան քաղաքի Տերյան փողոցի 62ա շենքի 4-րդ բնակարանը միանձնյա սեփականության իրավունքով գրանցված է ԻԻՀ քաղաքացի Ռոբերտ Բիգջոնիի անվամբ, ում պատկանում է նաև Վարդանանց փողոցի 10-րդ շենքի 8-րդ բնակարանը և գույքերի նկատմամբ սահմանափակումներ առկա չեն, ու այդ տեղեկությունը փոխանցել է Հարություն Մանուկյանին, ինչի դիմաց ստացել է 300 ԱՄՆ դոլար:

Հարություն Մանուկյանն այդ մասին տեղեկացրել է Թեհմինա Մանուկյանին, իսկ վերջինս ձեռնամուխ է եղել կեղծ լիազորագրի պատրաստման գործընթացին, որի շրջանակներում ՌԴ է հրավիրել իր մտերիմ, հանցավոր կազմակերպության մասնակից Հովհաննես Վարդանի Հովհաննիսյանին, ով 2024 հունվարի 22-ին թվականին մեկնել է ՌԴ Մոսկվա քաղաք:

Մոսկվայում Հովհաննես Հովհաննիսյանի լուսանկարով և Ռոբերտ Բիգջոնիի անձնական տվյալներով Թեհմինա Մանուկյանը ոմն Կամոյի օժանդակությամբ պատրաստել է Իրանի Իսլամական Հանրապետության քաղաքացու L53380667 սերիայի կեղծ անձնագիր, այն տրամադրել Հովհաննես Հովհաննիսյանին, որից հետո նա այդ կեղծ անձնագիրն օգտագործելով, 2024 թվականի հունվարի 24-ին, որպես Ռոբերտ Բիգջոնի, ներկայացել է ՌԴ Մոսկվայի մարզի Իվանտեևսկի նոտարական տարածքի նոտար Վ.Վ.Սամորոդովայի ժ/պ Յու.Լ.Ավդոնինայի գրասենյակ և Բելլա Սերգեյի Ցինդրինայի անվամբ տվել է սեղանամատյանի 50/275-ռ/50-2024-2-80 համարով թիվ 50 AB 238983 լիազորագիրը, որով Բ.Ցինդրինան լիազորվել է օտարելու հիշյալ բնակարանները:

Հանցավոր կազմակերպությունը ստեղծած և ղեկավարող անձինք 2024 թվականի փետրվարին փոստային առաքման միջոցով ՌԴ Միներալնիե Վոդի քաղաքում գտնվող

հանցավոր կազմակերպության անդամ Բելլա Ցինդրինային են փոխանցել նշված կեղծ լիազորագիրը, որից հետո Բելլա Ցինդրինան 2024 թվականի փետրվարի 7-ին ժամանել է Հայաստանի Հանրապետություն և հաջորդ օրը դիմումներ է ներկայացրել ՀՀ կադաստրի կոմիտե՝ խնդրելով տրամադրել համապատասխանաբար Երևան քաղաքի Վարդանանց փողոցի 10-րդ շենքի 8-րդ և Երևան քաղաքի Տերյան փողոցի 62ա շենքի 4-րդ բնակարանների վերաբերյալ փաստաթղթերի պատճենների թղթային տարբերակը՝ դիմումներին կից ներկայացնելով իր անձնագրի պատճենը, թիվ 50 AB 238983 համարի կեղծ լիազորագիրը, անշարժ գույքի նկատմամբ իրավունքի պետական գրանցման վկայականները:

Վերը նշված դիմումները ՀՀ կադաստրի կոմիտե մուտքագրելուց հետո Հարություն Մարտիրոսյանը Բելլա Ցինդրինային է տրամադրել փականագործ Վիարոն Հովակիմյանի հեռախոսահամարը, որով Բելլա Ցինդրինան կապ է հաստատել նրա հետ, ներկայանալով որպես բնակարանի սեփականատեր, պայմանավորվածություն է ձեռք բերել համապատասխան վճարի դիմաց բացել և փոխել Տերյան փողոցի 62ա շենքի 4-րդ բնակարանի մուտքի դռան փականը: Նշված գործողությունն իրագործելուց հետո Բելլա Ցինդրինան բնակարանի լուսանկարները «Վոթսապ» հավելվածի միջոցով ուղարկել է Հարություն Մարտիրոսյանին՝ հնարավոր գնորդներին ցույց տալու նպատակով:

Երևան քաղաքի Վարդանանց փողոցի 10-րդ շենքի 8-րդ բնակարանի մուտքի դուռը բացելու, դռան փականը նոր փականով փոխարինելու, ապա նաև այդ գույքերը կեղծ լիազորագրի օգտագործմամբ օտարելու գործընթացն ավարտին չեն հասցվել, քանի որ Բելլա Ցինդրինայի կողմից բնակարան ապօրինի մուտք գործելու հանգամանքը նկատել են հարևանությամբ բնակվող անձինք, ահազանգել ոստիկանություն, որից հետո Բելլա Ցինդրինան բերման է ենթարկվել ՀՀ ՆԳՆ ոստիկանություն, ինչի հետևանքով հանցավոր կազմակերպությունը չի կարողացել սկսել հանցանքի օբյեկտիվ կողմի կատարումը՝ իրենց կամքից անկախ հանգամանքներով:

(...)

Բացի այդ, Հարություն Մանուկյանը, Երևան քաղաքի Կենտրոն և Նորք-Մարաշ վարչական շրջաններում գործող համատիրություններից մեկի աշխատակից ոմն Նարինեից տեղեկություն ստանալով, որ Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի 116-րդ շենքի 28-րդ բնակարանը տևական ժամանակ բնակեցված չէ, այդ մասին հայտնել է Թեհմինա Մանուկյանին և Հարություն Մարտիրոսյանին, և 2024 թվականի մարտից ձեռնամուխ են եղել կեղծ փաստաթղթերի պատրաստման ու օգտագործման միջոցով խաբեության եղանակով այդ բնակարանը հափշտակելուն:

Բնակարանի սեփականատերերի և առկա սահմանափակումների վերաբերյալ տեղեկություններ ստանալու նպատակով Հարություն Մանուկյանը դիմել է իր կողմից հավաքագրված հանցավոր կազմակերպության մասնակից, այդ ընթացքում ՀՀ ԱՆ հարկադիր

կատարումն ապահովող ծառայության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և հատուկ նշանակության բաժնի ավագ հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցնող Արթուր Էդիկի Գրիգորյանին:

Արթուր Գրիգորյանն իր աշխատանքային կապերն օգտագործելով պարզել է, որ Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի 116-րդ շենքի 28-րդ բնակարանը միանձնյա սեփականության իրավունքով գրանցված է Ջերեկ Նորայրի Ավագյանի անվամբ և գույքի նկատմամբ սահմանափակումներ առկա չեն, ու այդ տեղեկությունը փոխանցել է Հարություն Մանուկյանին, ինչի դիմաց ստացել է 300 ԱՄՆ դոլար:

Հարություն Մանուկյանը վերոգրյալի մասին տեղեկացրել է Թեհմինա Մանուկյանին, իսկ վերջինս ձեռնամուխ է եղել կեղծ լիազորագրի պատրաստման գործընթացին, որի շրջանակներում ՌԴ-ում գտնվող իր մտերիմ, հանցավոր կազմակերպության մասնակից Հովհաննես Վարդանի Հովհաննիսյանի լուսանկարով և Ջերեկ Ավագյանի անձնական տվյալներով Թեհմինա Մանուկյանը ոմն Կամոյի օժանդակությամբ պատրաստել է Հայաստանի Հանրապետության քաղաքացու AG0210489 կեղծ անձնագիրը, այն տրամադրել Հովհաննես Հովհաննիսյանին, որից հետո վերջինս այդ կեղծ անձնագիրն օգտագործելով, 2024 թվականի մարտի 13-ին որպես Ջերեկ Ավագյան ներկայացել է ՌԴ Մոսկվա քաղաքի նոտար Նինա Վլադիմիրի Սուրցուկովայի գրասենյակ և Համլետ Արտոյանի Գևորգյանի անվամբ տվել է սեղանամատյանի 46/61-ռ/77-2024-2-440 համարով թիվ 77 АД 6181130 կեղծ լիազորագիրը, որով Հ.Գևորգյանը լիազորվել է օտարելու հիշյալ բնակարանը:

Հանցավոր կազմակերպությունը ստեղծած և ղեկավարող անձանց կողմից մշակված դերաբաշխմանը համապատասխան՝ հիշյալ լիազորագիրը փոխանցվել է Համլետ Գևորգյանին, ով 2024 թվականի մարտի 15-ին և մարտի 19-ին դիմումներ է ներկայացրել ՀՀ կադաստրի կոմիտե՝ խնդրելով տրամադրել Երևան քաղաքի Նալբանդյան փողոցի 116-րդ շենքի 28-րդ բնակարանի նոր վկայական, հատակագծի պատճենը և միասնական տեղեկատվություն՝ դիմումներին կից ներկայացնելով իր անձնագրի պատճենը և թիվ 77 АД 6181130 համարի կեղծ լիազորագիրը:

2024 թվականի մարտի 20-ին ՀՀ կադաստրի կոմիտեից ստանալով անհրաժեշտ տեղեկատվությունը՝ Համլետ Գևորգյանը վերը նշված բնակարանի գնորդ Միքայել Բեգլարի Մինասյանի հետ պայմանավորվածություն է ձեռք բերել 195.000 ԱՄՆ դոլար գումարով բնակարանը նրան վաճառելու շուրջ: Առուվաճառքի գործարք կնքելու նպատակով 2024 թվականի մարտի 22-ին Հ.Գևորգյանը և Մ.Մինասյանը գնացել են Երևան նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանի մոտ, սակայն վերջինս հայտնաբերելով, որ լիազորագրում Ջերեկ Ավագյանի տվյալներում նշված AG0210489 սերիա-համարի անձնագրի ժամկետը 2014 թվականից լրացած է, հրաժարվել է գործարքի վավերացումից:

Հանցավոր կազմակերպության դիտավորության մեջ ընդգրկված հանցանքն ամեն գնով ավարտին հասցնելու նպատակով, Հովհաննես Հովհաննիսյանը 2024 թվականի մարտի 24-ին կրկին մեկնել է ՌԴ Մոսկվա քաղաք և հաջորդ օրը գնացել նշված քաղաքի նոտար Նինա Վլադիմիրի Սուրցուկովայի գրասենյակ և նրա ժամանակավոր պաշտանակատար Լյուդմիլա Վալերի Սազանցևայից ձեռք է բերել մեկ այլ՝ սեղանամատյանի 46/61-ห/77-2024-1-494 համարում գրանցված թիվ 77 АД 6181219 համարի կեղծ լիազորագիր, այն ուղարկել Համլետ Գևորգյանին: Վերջինս նույն օրը նշված լիազորագրով դիմել է Երևան նոտարական տարածքի նոտար Նոնա Գասպարյանին, սակայն վերջինս նշել է, որ մի քանի օր ժամանակ է անհրաժեշտ լիազորագրի իսկությունը ճշտելու համար, ինչից հետո անհայտ անձի կողմից վերը նշված նույն լիազորագրում կեղծվել է Ջերեկ Ավագյանի անձնագրային տվյալները՝ նշելով, որ վերջինս հանդիսանում է ՌԴ քաղաքացի, իսկ անձնագրի սերիա-համարն է՝ 0313 428724: Համլետ Գևորգյանը նույն օրը այդ լիազորագրի օգտագործմամբ առուվաճառքի գործարք կատարելու համար ներկայացրել է Երևան նոտարական տարածքի նոտար Աշխեն Հարությունյանին, ով կրկին ժամանակ է պահանջել լիազորագրի իսկությունը ճշտելու համար:

Այնուհետև, նոտարներ Ա.Հարությունյանը և Ն.Գասպարյանը գրավոր հարցում են կատարել ՌԴ համապատասխան նոտարին, որի արդյունքում հայտնաբերելով, որ իրենց ներկայացված լիազորագրերը կեղծ են, 2024 թվականի ապրիլի 1-ին հաղորդում են ներկայացրել ՀՀ ՆԳՆ ոստիկանություն, ինչ արդյունքում հանցավոր կազմակերպության անդամներն իրենց կամքից անկախ հանգամանքներով չեն կարողացել իրագործել իրենց դիտավորության մեջ ընդգրկված հանցագործությունը: (...)»[1]*:*

6. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը 2025 թվականի մայիսի 20-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Քննարկվող հարցի կապակցությամբ հանրային մեղադրող Ա. Մարգարյանը դիրքորոշում է հայտնել այն մասին, որ միայն Արթուր Գրիգորյանի կողմից հարկադիր կատարողի պաշտոնը զբաղեցնելը բավարար չէ ասելու համար, որ նա, հանցանքի կատարմանը մասնակցելով, օգտագործել է իր ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունը: Իր գնահատմամբ այս հարցի կապակցությամբ եզրահանգումներ անելու համար նախ անհրաժեշտ է հետազոտել քրեական գործի նյութերը, քանի որ նախաքննությամբ պարզվել է, որ մեղադրյալ Հարություն Մանուկյանը ճանաչել է Արթուր Գրիգորյանին, որպիսի հանգամանքը հաստատել է նաև Արթուր Գրիգորյանը: Հարություն Մանուկյանը հայտնել է, որ դիմել է Արթուր Գրիգորյանին, պայմանավորվածություն են ձեռք բերել, որպեսզի վերջինս գույքերի սեփականատերերի և այդ գույքերն արգելադրված լինելու վերաբերյալ տեղեկություններ ձեռք բերի, ապա փոխանցի իրեն: Արթուր Գրիգորյանը հայտնել է, որ ինքը*

[1] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 43, թերթեր 216-239:

կաղաստրում ծանոթ ունի, կճշտի, կասի: Գործով որևէ այլ փաստական տվյալ ձեռք չի բերվել մեղադրյալի կողմից համապատասխան տեղեկատվությունը ձեռք բերելու հանգամանքների վերաբերյալ: Հետևաբար գործի ընդդատությունը ճիշտ է որոշված:

Բացի այդ, կարծում է, որ անձը պետք է կատարող հանդիսանա, որպեսզի արարքը որակվի որպես կոռուպցիոն հանցագործություն, մինչդեռ Արթուր Գրիգորյանի փաստացի կատարած արարքը օժանդակություն է, ուղղակի արաքը որակելիս ՀՀ քրեական օրենսգրքի 46-րդ հոդվածին հղում չի կատարվել, քանի որ Արթուր Գրիգորյանը հանցանքները կատարել է հանցավոր կազմակերպության կազմում:

Ի պատասխան Դատարանի հարցերի՝ հանրային մեղադրողը հայտնել է, որ մեղադրանքում նշելով աշխատանքային կապերն օգտագործելով ճշտել է՝ նկատի են ունեցել, որ ճանաչում է կաղաստրում կամ համապատասխան մարմնում աշխատող ինչ-որ անձի, (որին չեն կարողացել բացահայտել), և զանգի միջոցով իմացել է անհրաժեշտ տեղեկատվությունը: Իր համոզմամբ պարտադիր չէ հարկադիր կատարումն ապահովող ծառայությունում աշխատել՝ նման տեղեկատվությունը ստանալու հնարավորություն ունենալու համար: Մեղադրանքում տրված ձևակերպումները բխում են գործի փաստական հանգամանքներից:

Տուժողների լիազոր ներկայացուցիչները միացել են հանրային մեղադրողի դիրքորոշմանը:

Արթուր Գրիգորյանի պաշտպան Ա. Սախոյանը և Վահագն Առաքելյանի պաշտպան Ս. Հարությունյանը հայտնել են, որ համակարծիք են հանրային մեղադրողի դիրքորոշման հետ:

Դատական նիստին ներկա մյուս պաշտպանները դիրքորոշում են հայտնել այն մասին, որ հարցի լուծումը թողնում են Դատարանի հայեցողությանը:

(...)

Դատարանն արձանագրում է հետևյալը.

Ըստ Արթուր Գրիգորյանին ներկայացված մեղադրանքի փաստական մասի նկարագրության՝ վերջինս մասնակցել է Հարություն Իշխանի Մանուկյանի և այլոց կողմից ստեղծված և ղեկավարած հանցավոր կազմակերպությանը՝ դրա կազմում կատարելով մի շարք հանցագործություններ, այդ թվում՝ խարդախության եղանակով առանձնապես խոշոր չափերով գույքի հափշտակություններ:

Ընդ որում, կրկին մեղադրանքում տրված ձևակերպումների համաձայն՝ Արթուր Գրիգորյանը վերագրվող արարքները կատարելու պահին զբաղեցրել է ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և հատուկ նշանակության բաժնի ավագ հարկադիր կատարողի պաշտոնը և, ինչը խիստ կարևոր է ու հատկանշական, աշխատանքային կապերն օգտագործելով է կատարել վերագրվող հանցանքների օբյեկտիվ կողմի մաս կազմող գործողությունները՝ սույն դեպքում պարզել և հանցավոր կազմակերպության ղեկավարին է փոխանցել հափշտակության ենթակա գույքերի սեփականատերերի և դրանց նկատմամբ սահմանափակումներ կիրառված չլինելու վերաբերյալ

տեղեկություններ, որոնք հիմք են հանդիսացել կեղծ փաստաթղթեր կազմելու և պլանավորված հափշտակություններն ավարտին հասցնելու համար: Նշված գործողությունները կատարելու համար Արթուր Գրիգորյանը թե՛ տեղեկատվությունը փոխանցելու պահին, թե՛ հափշտակությունը հանցավոր կազմակերպության կողմից ավարտին հասցնելուց հետո ստացել է գումար, որի մեծ մասը հանդիսացել է հափշտակված գումարի՝ նախապես նրան խոստացված մասը (վերջին ձևակերպումը վերաբերում է 5000-ական ԱՄՆ դոլարները ստանալուն):

Ավելին՝ սույն դեպքում չի կարող ուշադրությունից դուրս մնալ նաև այն հանգամանքը, որ Արթուր Գրիգորյանը հանցավոր կազմակերպության ղեկավարին է փոխանցել տեղեկություններ, որոնք Արթուր Գրիգորյանին կարող էին հաստ դառնալ բացառապես իշխանական կամ ծառայողական լիազորությունների բերումով կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, քանի որ օրինակ անշարժ գույքի նկատմամբ սահմանափակումներ կիրառված լինելու կամ չլինելու վերաբերյալ տեղեկատվությունն ազատ շրջանառության առարկա հանդիսանացող տեղեկատվություն չէ, այն կարող է տրամադրվել գույքի սեփականատիրոջը կամ նրա լիազորված անձին կամ պատկան մարմիններում պաշտոն զբաղեցնող անձանց՝ պայմանավորված վերջիններիս լիազորությունների իրականացումից բխող անհրաժեշտությամբ, կամ այդպիսի տեղեկատվությանը կարող է տիրապետել հենց ինքը՝ պատկան մարմինը, որպիսին հանդիսանում է նաև դատական ակտերի հարկադիր կատարման ծառայությունը, առանձին վերցրած՝ դրա ծառայողը: Ընդ որում՝ Արթուր Գրիգորյանի նկատմամբ քրեական հետապնդում հարուցելիս հենց այդպիսի հանգամանքն է հաստատված համարվել, որպիսի եզրահանգումը բխում է նրա մեղադրանքում տրված այն հաստատական ձևակերպումից, որ նա, դերաբաշխման համաձայն՝ հափշտակության առարկա հանդիսացող գույքերի վերաբերյալ տեղեկատվությունը ստացել է և փոխանցել է հանցավոր կազմակերպության ղեկավարին՝ իր աշխատանքային կապերն օգտագործելով: Մյուս կողմից մեղադրանքում տրված այդպիսի ձևակերպումն ուղղակիորեն վկայում է այն մասին, որ, եթե անգամ Արթուր Գրիգորյանն այդ տեղեկատվությունը ստանալու համար չի օգտագործել իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները, ապա առնվազն օգտագործել է դրանցով պայմանավորված ազդեցությունը կամ հեղինակությունը՝ որևէ այլ պաշտոնատար անձից նման տեղեկատվություն ստանալով: Հակառակը ողջամտորեն բացառում է նման տեղեկատվության ստացման հնարավորությունը:

Ավելին՝ քննարկվող հարցի համատեքստում Դատարանը ցանկանում է անդրադառնալ նաև աշխատանքային կապերը հասկացության մեկնաբանմանը և արձանագրում է հետևյալը: Աշխատանքային կապերը, եթե խոսքը վերաբերում է պաշտոնատար անձին, նրա իշխանական կամ ծառայողական լիազորությունների իրականացման ընթացքում ձևավորված և շարունակվող, ինչպես նաև այդ լիազորությունների իրականացման անհրաժեշտությամբ պայմանավորված կապեր են, որոնք միտված են աշխատանքն արդյունավետ կազմակերպելուն

(աշխատանքի ընթացքում ի հայտ եկող տարատեսակ հարցեր կազմակերպելուն, կարգավորելուն, լուծելուն և այլն): Ընդ որում՝ շատ հաճախ այդպիսի կապերի ձևավորումը անհրաժեշտություն է և անխուսափելի (աշխատանքն արդյունավետ իրականացնելու համար պետք է համագործակցել այլ ստորաբաժանման պաշտոնատար անձի կամ ծառայողի հետ, օրինակ՝ նախաքննության մարմինը հետաքննության մարմնի, ՏԻՄ պաշտոնատար անձը ոստիկանության ծառայողի, ԴԱՀԿ ծառայողը անշարժ գույքի կադաստրի կոմիտեի աշխատակցի հետ և այլն): Ստացվում է, որ այդպիսի կապերի ձևավորման և շարունակման հիմքը պաշտոնատար անձի իշխանական և ծառայողական լիազորությունների իրականացումն է, քանի որ նրա աշխատանքն ուղղակիորեն կապված է այդպիսի լիազորությունների իրականացման հետ: Այլ կերպ՝ չլիներ այդ աշխատանքը, չէին ձևավորվի, ապա նաև շարունակվի այդ կապերը: Հետևաբար, նման կապերը հանցավոր նպատակներին ծառայեցնելն ուղղակիորեն իշխանական կամ ծառայողական լիազորությունների կամ դրանցով պայմանավորված ազդեցության բանեցումն է՝ հանցավոր դիտավորության մեջ ընդգրկված արարքը սկսելու և ավարտին հասցնելու համար, որպիսի դեպքերում կատարված հանցանքը չի կարող դուրս մնալ կոռուպցիոն համարվելու տրամաբանությունից: Հակառակ որևէ մեկնաբանություն կհանգեցնի անորոշության, ինչն անթույլատրելի է:

Նման պայմաններում չի կարող տրվել այլ մեկնաբանություն, քան այն, որ Արթուր Գրիգորյանին վերագրվող առանձնապես խոշոր չափերի գույքի խարդախությամբ ենթադրյալ հափշտակության դրվագները դասվում են կոռուպցիոն հանցանքների շարքին: Ի վերջո քրեական հետապնդման մարմինն ինքն է հաստատված համարել այդ հանգամանքը՝ վերոգրյալ փաստական հանգամանքների ձևակերպմամբ Արթուր Գրիգորյանի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելով, իսկ Դատարանն իր հերթին վերջնական դատական ակտ կայացնելիս այդ հանգամանքը պետք է հաստատված կամ հերքված համարի: Այսինքն՝ քննության առարկա պետք է հանդիսանա նաև Արթուր Գրիգորյանի կողմից ենթադրաբար կոռուպցիոն հանցանք կատարելու փաստը:

Դատարանը հարկ է համարում արձանագրել, որ հիշյալ վերլուծությունը բխում է բացառապես մեղադրանքում տրված ձևակերպումներից, որոնք իրենց հերթին բխում են գործով ձեռք բերված փաստական տվյալներից, ինչը հաստատել է հանրային մեղադրողը Դատարանի հարցերին պատասխանելիս:

(...) Դատարանն արձանագրում է, որ սույն գործի քննությունն ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին՝ նկատի ունենալով, որ գործով անցնող մեղադրյալներից Արթուր Գրիգորյանին վերագրվող առնվազն մի քանի դրվագ հանցավոր արարքները դասվում

են Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված հանցանքների շարքին: (...)»[2]*:*

7. Հակակոռուպցիոն դատարանը 2025 թվականի հունիսի 2-ի որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«(...) Դատարանը, ուսումնասիրելով քրեական վարույթի նյութերը, գտնում է, որ թիվ ՀԿԴ/0119/01/25 վարույթն ընդդատյա չէ ՀՀ հակակոռուպցիոն դատարանին, ուստի ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածով սահմանված կարգով անհրաժեշտ է այն ուղարկել ՀՀ վճռաբեկ դատարանի նախագահին՝ ընդդատության մասին վեճը լուծելու համար:*

Մասնավորապես՝ մեղադրյալ Արթուր Էդիկի Գրիգորյանին ներկայացված մեղադրանքի ձևակերպումից պարզ է դառնում, որ նա Հարություն Իշխանի Մանուկյանի, Հարություն Վաչագանի Մարտիրոսյանի, Թեհմինա Հակոբի Մանուկյանի և դեռևս չպարզված այլ անձանց կողմից ստեղծված ու ղեկավարված հանցավոր կազմակերպության կազմում կատարել է մի շարք հանցանքներ, այդ թվում՝ խարդախության եղանակով ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափերով հափշտակություն:

Անդրադառնալով Արթուր Էդիկի Գրիգորյանին ներկայացված մեղադրանքի ձևակերպման մեջ տեղ գտած՝ «աշխատանքային կապերն օգտագործելով» եզրույթին Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ վիճարկվող որոշմամբ տրված մեկնաբանությանը, ապա այն Դատարանի համար ընդունելի համարվել չի կարող, քանզի «աշխատանքային կապերի օգտագործում» հասկացությունը որևէ կերպ չի կարող նույնացվել «իշխանական կամ ծառայողական լիազորությունների օգտագործում» եզրույթի հետ՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ որպես իշխանական կամ ծառայողական լիազորությունների օգտագործում, պետք է դիտարկել այնպիսի արարքի կատարումը, որը բխում է պաշտոնատար անձի լիազորություններից և սահմանված է համապատասխան իրավական ակտով, մինչդեռ Արթուր Էդիկի Գրիգորյանին ներկայացված մեղադրանքում «աշխատանքային կապեր» եզրույթն օգտագործելով վարույթի հանրային մասնակիցներն առերևույթ նկատի են ունեցել այն գործառույթները, որոնք չեն բխել պաշտոնատար անձի լիազորություններից:

Այս համատեքստում Դատարանը նաև իր անհամաձայնությունն է հայտնում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այն դատողության հետ, ըստ որի՝ Արթուր Էդիկի Գրիգորյանի կողմից փոխանցված տվյալները նրան կարող էին հասու դառնալ՝ «բացառապես իշխանական կամ ծառայողական լիազորությունների բերումով կամ դրանցով պայմանավորված ազդեցությամբ», քանզի, ինչպես նշվեց վերևում, «աշխատանքային կապեր» եզրույթի ներքո սույն դեպքում անհրաժեշտ է հասկանալ այն կապերը, որոնք չեն բխել պաշտոնատար անձի լիազորություններից՝ հակառակ դեպքում՝ հանցավոր կազմակերպության

[2] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 50, թերթեր 99-170:

ղեկավարին փոխանցված տվյալներն Արթուր Էդիկի Գրիգորյանին՝ իր ծառայողական կամ իշխանական լիազորությունների կամ դրանցով պայմանավորված ազդեցության օգտագործմամբ հասու դառնալու դեպքում այդ մասին ուղղակի նշում կլիներ հսկող դատախազի հանրային քրեական հետապնդում հարուցելու մասին որոշման մեջ:

Անդրադառնալով նաև Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի՝ վիճարկվող որոշման մեջ տեղ գտած այն պնդմանը, ըստ որի՝ աշխատանքային կապերն օգտագործելու վերաբերյալ մեղադրանքում տրված ձևակերպումը, առնվազն, վկայում է այն մասին, որ Արթուր Էդիկի Գրիգորյանը մեղսագրված ենթադրյալ հանցանքները կատարել է իշխանական կամ ծառայողական լիազորություններով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով, Դատարանը հարկ է համարում նկատել, որ այն կրում է սուբյեկտիվ բնույթ և իր հաստատումը չի գտնում քրեական վարույթի նյութերում:

Այլ խոսքով, Արթուր Էդիկի Գրիգորյանին ներկայացված մեղադրանքի համաձայն՝ վերջինիս կողմից ուրիշի գույքի առանձնապես խոշոր չափերով ենթադրյալ հափշտակությունը չի կատարվել իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Ի վերջո, անհնար է անտեսել այն հանգամանքը, որ սույն վարույթը ՀՀ հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու վերաբերյալ՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի հետևությունների հետ համաձայնելու պարագայում վարույթն իրականացնող՝ ՀՀ հակակոռուպցիոն դատարանը՝ «թունավոր ծառի պտուղները ևս թունավոր են» հայեցակարգի համատեքստում անխուսափելիորեն բախվելու է՝ Արթուր Էդիկի Գրիգորյանի և մյուս մեղադրյալների նկատմամբ նախաքննությունն ոչ պատշաճ սուբյեկտի կողմից կատարված լինելու և որպես դրա հետևանք՝ հիշյալ վարույթի շրջանակներում իրականացված քննչական և այլ դատավարական գործողությունների ու դրանց արդյունքում ձեռք բերված տվյալների անօրինականության և անթույլատրելիության հաստատման փաստի հետ:

Վերոգրյալի հաշվառմամբ՝ Դատարանն իր անհամաձայնությունն է հայտնում Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի այն դիրքորոշման հետ, ըստ որի՝ սույն քրեական վարույթն ընդդատյա է ՀՀ հակակոռուպցիոն դատարանին: (...)»[3]*:*

<u>Սույն որոշման հիմնավորումները և եզրահանգումը.</u>

8. Սույն վարույթով բարձրացված իրավական հարցը հետևյալն է. հիմնավո՞ր է արդյոք Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1580/01/25

[3] Տե՛ս քրեական վարույթ, հատոր 51, թերթեր 79-103:

(ՀԿԴ/0119/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

9. ՀՀ Սահմանադրության 63-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «*Յուրաքանչյուր ոք ունի անկախ և անաչառ դատարանի կողմից իր գործի արդարացի, հրապարակային և ողջամիտ ժամկետում քննության իրավունք*»:

10. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Յուրաքանչյուր ոք, (...) նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք*»:

10.1. Մարդու իրավունքների եվրոպական դատարանը, *«օրենքի հիման վրա ստեղծված դատարան»* հասկացությունը մեկնաբանելիս նշել է. *«Այն երկրներում, որտեղ օրենքը կոդիֆիկացված է, դատական համակարգի կազմակերպումը չի կարող թողնվել դատական մարմինների հայեցողությանը, սակայն դա չի նշանակում, որ դատարաններն օժտված չեն համապատասխան ազգային օրենսդրությունը մեկնաբանելու որոշակի ազատությամբ»*[4]*:*

Միևնույն ժամանակ, դատարանի մատչելիության իրավունքի համատեքստում Մարդու իրավունքների եվրոպական դատարանը նշել է, որ. *«Ներպետական դատական ատյանները դատավարական կանոնները կիրառելիս պետք է ձեռնպահ մնան դրանց չափազանցված ձևականացումից, որն իր ազդեցությունը կունենա դատավարության արդարացիության վրա»*[5]*:*

11. Վճռաբեկ դատարանը *Գևորգ Հարությունյանի* գործով իրավական դիրքորոշում է ձևավորել այն մասին, որ. *«(...) Գործերի պատշաճ ընդդատությունը, որպես արդար դատաքննության անհրաժեշտ բաղկացուցիչ, հիմնարար իրավական արժեք է: Դրա հիմնարար բնույթը բխում է արդար դատաքննության ինստիտուցիոնալ տարրից՝ անկախ, անկողմնակալ, իրավասու և օրենքի հիման վրա ստեղծված դատարան ապահովելու պետության պոզիտիվ պարտականությունից: Իսկ այդ պարտականությունն իր հերթին, ըստ էության, ամրագրված է Հայաստանի Հանրապետության իրավական համակարգում բարձրագույն իրավաբանական ուժ ունեցող այնպիսի նորմատիվ ակտերում, ինչպիսիք են ՀՀ Սահմանադրությունը (...), Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագիրը (14-րդ հոդված) և «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» եվրոպական կոնվենցիան (6-րդ հոդված): (...)*

---

[4] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Gorgiladze v. Georgia* գործով 2009 թվականի հոկտեմբերի 20-ի վճիռը, գանգատ թիվ 4313/03, 69-րդ կետ:

[5] Տե՛ս Մարդու իրավունքների եվրոպական դատարանի՝ *Walchli v. France* գործով 2007 թվականի հուլիսի 26-ի վճիռը, գանգատ թիվ 35787/03, 29-րդ կետ:

Պատշաճ ընդդատության հիմնարար իրավական նշանակությունն այն է, որ յուրաքանչյուր կոնկրետ քրեական գործը քննող դատարանի որոշման հստակ կանոնների առկայությունը և դրանց կանխատեսելի գործադրումն անհրաժեշտ պայման են կողմնակի դիտորդի մոտ այնպիսի համոզմունք ձևավորելու համար, որ տվյալ կոնկրետ քրեական գործը քննող դատարանը և դատավորը նախատրամադրվածություն չունեն, և տվյալ գործը վարույթ ընդունելիս սուբյեկտիվիզմն ու կամայականությունը բացառված են եղել:

Այսպիսով, քրեական գործերի ընդդատության որոշման հստակ, կամայականությունը բացառող կանոնների առկայությունը և գործադրումը պարտադիր նախապայման են արդարադատության մատչելիության պատշաճ երաշխավորման համար (...)»[6]*:*

12. Վերոգրյալից հետևում է, որ ընդդատության կանոններն այն չափանիշներն են, որոնց հիման վրա որոշվում է, թե տվյալ գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն: Ընդդատության կանոնները կոչված են անձին զերծ պահելու դատական շրջապտույտից, որը կարող է առաջանալ, եթե դատարանները հրաժարվեն գործը վարույթ ընդունել՝ իրենց ընդդատյա չլինելու պատճառաբանությամբ:

Ընդդատության ինստիտուտը հիմնարար նշանակություն ունեցող արժեք է, քանի որ այն անմիջականորեն կապված է անձի՝ օրենքի հիման վրա ստեղծված դատարանի կողմից իր գործի քննության իրավունքի հետ: Քրեական վարույթի մասնակիցների համար պետք է կանխատեսելի լինի, թե իրենց գործով որ դատարանը պետք է իրականացնի արդարադատություն:

13. ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 260-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Մարզերի առաջին ատյանի ընդհանուր իրավասության և Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարաններին (այսուհետ՝ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան) ընդդատյա են առաջին ատյանի կարգով իրականացվող բոլոր վարույթները, բացառությամբ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի հավելված N 1-ով նախատեսված կոռուպցիոն հանցանքների վերաբերյալ վարույթների, որոնք ընդդատյա են հակակոռուպցիոն դատարանին»:*

ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Նախնական դատաքննությունների ընթացքում պարզելով, որ տվյալ վարույթն ընդդատյա չէ իրեն, դատարանն այն որոշմամբ անհապաղ փոխանցում է ըստ ընդդատության:*

(...)

5. Վարույթն ըստ ընդդատության ստացած հակակոռուպցիոն կամ առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը մինչև նախնական դատաքննություն նշանակելը եռօրյա

---

[6] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գևորգ Հարությունյանի* գործով 2011 թվականի հուլիսի 13-ի թիվ ԵԿԴ/0211/01/10 որոշումը, կետեր 15-16:

ժամկետում որոշում է կայացնում վարույթը Վճռաբեկ դատարան ուղարկելու մասին, եթե համաձայն չէ դրա առարկայական ընդդատությանը:

(...)

8. Սույն հոդվածի 5-րդ մասով նախատեսված դեպքում Վճռաբեկ դատարանի նախագահը, Վճռաբեկ դատարանի քրեական և հակակոռուպցիոն պալատների նախագահները վարույթը Վճռաբեկ դատարանում ստանալու պահից տասնօրյա ժամկետում վերջնականապես լուծում են վարույթի առարկայական ընդդատության հարցը՝ ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ ընդունված որոշմամբ: Քվեարկելիս ձեռնպահ մնալ չի թույլատրվում:

9. Սույն հոդվածով սահմանված կարգով որոշված դատարանը համարվում է իրավասու դատարան»:

14. Սույն վարույթի նյութերի ուսումնասիրությունից երևում է, որ՝

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը, արձանագրելով, որ Ա.Գրիգորյանը վերագրվող ենթադրյալ հանցանքները կատարելու պահին զբաղեցրել է ՀՀ արդարադատության նախարարության հարկադիր կատարումն ապահովող ծառայության ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման և հատուկ նշանակության բաժնի ավագ հարկադիր կատարողի պաշտոնը, գտել է, որ վերջինս հանցավոր կազմակերպության ղեկավարին է փոխանցել այնպիսի տեղեկություններ, որոնք իրեն կարող էին հասու դառնալ բացառապես իշխանական կամ ծառայողական լիազորությունների բերումով կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելով:

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանը նշել է նաև, որ Ա.Գրիգորյանին ներկայացված մեղադրանքի ձևակերպումը վկայում է այն մասին, որ, եթե անգամ վերոնշյալ տեղեկատվությունը ստանալու համար վերջինս չի օգտագործել իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները, ապա առնվազն օգտագործել է դրանցով պայմանավորված ազդեցությունը կամ հեղինակությունը՝ որևէ այլ պաշտոնատար անձից նման տեղեկատվություն ստանալու եղանակով[7]:

- Հակակոռուպցիոն դատարանը գտել է, որ *«աշխատանքային կապերի օգտագործում»* հասկացությունը չի կարող նույնացվել *«իշխանական կամ ծառայողական լիազորությունների օգտագործում»* եզրույթի հետ՝ նկատի ունենալով, որ որպես իշխանական կամ ծառայողական լիազորությունների օգտագործում պետք է դիտարկել այնպիսի արարքի կատարումը, որը բխում է պաշտոնատար անձի լիազորություններից և սահմանված է համապատասխան իրավական ակտով, մինչդեռ Ա.Գրիգորյանին ներկայացված մեղադրանքում *«աշխատանքային կապեր»* եզրույթն օգտագործելով վարույթի հանրային

[7] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

մասնակիցներն առերևույթ նկատի են ունեցել այն գործառույթները, որոնք չեն բխել պաշտոնատար անձի լիազորություններից[8]:

15. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշմամբ վկայակոչված իրավադրույթների և արտահայտված իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ պետք է փաստել, որ մեղադրյալ Ա.Գրիգորյանին ներկայացված մեղադրանքի ձևակերպումից հետևում է, որ ենթադրյալ հանցանքները ՀՀ քրեական օրենսգրքի «Կոռուպցիոն հանցանքների ցանկ» N 1 հավելվածով սահմանված՝ «***իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու***» եղանակով կատարելու հատկանիշը վերջինին մեղսագրված չէ: Հետևաբար, հիմք ընդունելով գործը բացառապես անձին ներկայացված մեղադրանքի հիմքում դրված փաստական հանգամանքների սահմաններում քննելու օրենսդրական պահանջը, գտնում ենք, որ Ա.Գրիգորյանի նկատմամբ հարուցված հանրային քրեական հետապնդման պայմաններում, սույն վարույթը Հակակոռուպցիոն դատարանին ընդդատյա լինելու իրավական հիմքը բացակայում է:

Միաժամանակ հիմքեր չկան չհամաձայնելու Հակակոռուպցիոն դատարանի այն դիրքորոշմանը, որ Ա.Գրիգորյանին ներկայացված մեղադրանքում տեղ գտած՝ *«աշխատանքային կապերն օգտագործելով»* եզրույթն ինքնին, այլ վերաբերելի փաստական տվյալների բացակայության պայմաններում, չի կարող նույնանալ ՀՀ քրեական օրենսգրքի «Կոռուպցիոն հանցանքների ցանկ» N 1 հավելվածով սահմանված՝ *«իշխանական կամ ծառայողական լիազորությունները կամ դրանցով պայմանավորված ազդեցությունն օգտագործելու»* հասկացության հետ, իսկ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանի այն դատողությունը, որ, եթե անգամ տեղեկատվություն ստանալու համար Ա.Գրիգորյանը չի օգտագործել իր իշխանական կամ ծառայողական լիազորությունները, ապա առնվազն օգտագործել է դրանցով պայմանավորված ազդեցությունը կամ հեղինակությունը՝ ոչ այլ ինչ է, քան փաստական տվյալներով չհիմնավորված ենթադրություն:

16. Վերոշարադրյալը հիմք է տալիս փաստելու, որ Հակակոռուպցիոն դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ԵԴ1/1580/01/25 (ՀԿԴ/0119/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին, հիմնավոր է:

17. Հետևաբար, գտնում ենք, որ թիվ ԵԴ1/1580/01/25 (ՀԿԴ/0119/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

---

[8] Տե՛ս սույն որոշման 7-րդ կետը:

Ղեկավարվելով ՀՀ քրեական դատավարության օրենսգրքի 263-րդ հոդվածի 8-րդ մասով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն Ք

- Արթուր Էդիկի Գրիգորյանի վերաբերյալ՝ ութ դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, երեք դրվագ՝ 44-255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, չորս դրվագ՝ 43-255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով և տասներեք դրվագ՝ 457-րդ հոդվածի 2-րդ մասով,

- Արթուր Վարդանի Ղազարյանի վերաբերյալ՝ երկու դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով և երկու դրվագ՝ 457-րդ հոդվածի 2-րդ մասով,

- Տարոն Գարեգինի Վիրաբյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով և 457-րդ հոդվածի 2-րդ մասով,

- Վահագն Մանուկի Առաքելյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 44-255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով և երկու դրվագ՝ 457-րդ հոդվածի 2-րդ մասով,

- Հովհաննես Վարդանի Հովհաննիսյանի վերաբերյալ՝ երկու դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 43-255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 44-255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով և երեք դրվագ 457-րդ հոդվածի 2-րդ մասով,

- Անահիտ Հովիկի Պետրոսյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 43-255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով և երկու դրվագ 457-րդ հոդվածի 2-րդ մասով,

- Աննա Աշոտի Սահակյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով և 457-րդ հոդվածի 2-րդ մասով,

- Համլետ Արտյոմի Գևորգյանի վերաբերյալ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով, 457-րդ հոդվածի 2-րդ մասով,

- Մարգար Ֆրիդրիխի Մարգարյանի վերաբերյալ՝ երկու դրվագ՝ ՀՀ քրեական օրենսգրքի 255-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին և 3-րդ կետերով, 319-րդ հոդվածի 1-ին մասով և երկու դրվագ 457-րդ հոդվածի 2-րդ մասով թիվ 69118225 (ԵԴ1/1580/01/25) քրեական վարույթն ընդդատյա է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քրեական դատարանին:

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՔՐԵԱԿԱՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀ ՀԱՄԼԵՏ ԱՍԱՏՐՅԱՆ

ՀՀ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ՊԱԼԱՏԻ ՆԱԽԱԳԱՀԻՆ ՓՈԽԱՐԻՆՈՂ ԱՐՄԱՆ ԿՈՒՐԵԽՅԱՆ